


ገጽ ፩ ለ  
የግብርና ጽ/ቤት



ግብርና

ግብርና





-6 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՆՏՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԴԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99-82

L-35

28

Լ Ե Ն Ի Ն Ը  
Հ Ա Յ Ֆ Ո Ւ Կ Լ Ո Ր Ի Մ Ե Ձ

ԽՐԱԿՆԻՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆԵՐԱԿՈՒԹՅԱՆ  
Ե Մ Ե Լ Ի Գ Ռ Հ Ա Ն Ջ Ս Ն Յ Ա Ն Ի

Ա լ խ ո ս ս լ զ ու ղ լ ու մ ք  
Գ Ր Ա Գ Ն Բ Գ Յ Ա Ն Ի Յ Ե Վ Ա Գ Ա Ն Ա Ա Ն Յ Ա Ն Ի

42/89

477

Գ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ր Ի Թ Յ Ո Ւ Ն

1 9 3 6




17 SEP 2013

Պատ. խմբ. Պրոֆ. Հ. Գյուլիֆեվի խումբ  
Տեխ. խմբ. Տ. Խաչվանգյան  
Սրբազորիչ Վ. Մանուկյան



Պետհրատի տպարան,  
Գլավլիտ 314, Պատվեր 1286,  
Հրատ. 1523, Տիրած 5000.



### Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

«Լեհիճը հայ Ֆոլկլորի մեջ» ժողովածուն մի փոքրիկ մասն է  
«Հայաստանի խորհրդային ֆոլկլորի» այն հարուստ նյութերի, վոր  
վերջին շրջանում հավաքել էր և գրի առել նախկին Կուլտուրայի  
Պատմության Ինստիտուտը: Ֆոլկլորային արխիվը ներկայումս պահ-  
վում է և ուսումնասիրվում ՀՍԽՆ Պատմության յեվ Գրականության  
Ինստիտուտի Ֆոլկլորի սեկտորում:

«Հայաստանի խորհրդային Ֆոլկլորը» հավաքել և գրել յի առել  
Ինստիտուտի աշխատակից բանահավաք, աշուղական ստեղծա-  
գործությունների հմուտ մասնագետ Գեղամ Թարվերդյանը:

Ժողովածուի մեջ տեղ են գտել վոչ բոլոր գրի առած նյու-  
թերը: Վորոշ ընտրություն ենք կատարել, աշխատելով լույս ըն-  
ծայել միայն ընտրոշն ու տիպականը: Յերդերի տարբերակները  
թողել ենք ապագային:

Ժողովածուի մեջ տեղ գտած նյութերը բարբառագրություն  
տեսակետից թերի յին: Բանահավաքը հաճախ անտեսել է բարբա-  
ռային հնչյունական առանձնահատկությունները, տառադարձել է  
գրական արտասանությամբ կամ բոլոր բարբառների վրա գրել է  
իր հայրենի պարսկահայ բարբառի կնիքը:

Ժողովածուի նյութերի ընտրությունը, խմբագրմանը, դասա-  
վորմանը, ինչպես և ծանոթագրություններին ու բառարանի կազ-  
մելուն աշխատակիցել են բանահավաքն ու Ինստիտուտի գիտ. աշ-  
խատակից-ֆոլկլորիստ Արամ Ղանալանյանը:

«Ներածության» մեջ յեղած ֆոլկլորային հատվածները ու-  
սերենից հարազատ թարգմանել է կամ բովանդակությունը համա-  
ռոտ շարագրել «Ներածության» հեղինակը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կ ՄԵԼԻՔ-ՈՂՍԵՂՍԵԱՆ

ԼԵՆԻՆԸ ՖՈԼԿԻ ՈՐԻ ՄԵՋ

Ֆոլկլորը, վորպես մասսաների բանավոր ստեղծագործութիւն,  
կենդանի յե, անմիջական ու հարաճուն Մարդկային հասարակու-  
թյան կյանքը՝ աշխատանքն ու պայքարը, քաղաքական ու հաս-  
րակական բախումներն ու կենսական բարիքների համար ընու-  
թյան դեմ մղվող կռիվն իրենց անմիջական և դունազեղ արտա-  
հայտութիւնն են գտել Ֆոլկլորի մեջ:

Յուրաքանչյուր մարդկային խմբակցութիւն, հոմայնք, տոհմ  
կամ ցեղ, դասակարգային հասարակութիւն մեջ յուրաքանչյուր  
դաս կամ դասակարգ ունի իր Ֆոլկլորը, յուրահատուկ բանավոր  
մի ստեղծագործութիւն, վորի մեջ ցայտուն կերպով արտահայտ-  
ված, զրսերոված և հասարակական խմբակցութիւն նիստն ու  
կացը, պայքարն ու աշխատանքը, խինդն ու վիշտը, դարերի ըն-  
թացքում կուտակված իմաստութիւնն ու հուշերն աշխարհը:  
Յեթն անցյալ հասարակական Ֆորմացիաներում Ֆոլկլորը գերիշ-  
խում եր հասարակութիւն մտավոր կյանքում (անգիր շրջան) կամ  
նրա իդեոլոգիական աշխարհի համապատասխան հիմնական աղ-  
բյուրներից մեկն է յեղիլ (դիր ու դրականութիւն շրջան), իսկ  
շահագործվող դասակարգերի միջավայրում դարձյալ գերիշխել և,  
սպա մեր դարում, յերբ հասարակութիւն ամբողջ ստեղծագործ  
մտավոր կյանքն արտացոլված է գերազանցապես գիր ու գրակա-  
նութիւն մեջ, միայն փոքր մասն է բաժին հասել Ֆոլկլորին:

Ֆորկլորը յերկու հիմնական մասերի յե բաժանվում՝ ա. ան-  
ցյալի բանավոր ստեղծագործութիւնը, վոր բերանից բերան ավանդ-  
վելով՝ այսօր դեռ ապրում է մասսաների մեջ, վորպէս անցյալ  
հասարակական կյանքի գերապրուկներ, և բ. արդէ բանավոր  
ստեղծագործութիւնը, վոր որ ավուր ստեղծվում է մեր աչքերի  
առաջ, մեր ասլած կյանքի այլ և այլ բնագավառներին նվիրված:  
Մասսաները, մասնավորապէս աշխատավորական լայն զանգված-  
ները, դեղարվեստական չափածո և արձակ ստեղծագործութիւն-  
ներով մշտն է կենդանի և անբռնազրոսիկ արձագանքել են իրենց  
զարկ կյանքին ու պայքարին, վորը գիտել են դասակարգային  
սեռանկրունով:

Արդէ ֆոլկլորը մեջ, բնականաբար, մեր հեղափոխական ար-  
դիականութիւնը մեծ տեղ պիտի զբաղի, գերելջող պիտի հան-  
դիսանար: Այլ կերպ չի կարող լինել Հոկտեմբերը, պրոլետարա-  
կան մեծ հեղափոխութիւնը, հարատե դասակարգային պայքարը,  
կոլտնտաբժոււմը, կուլտուրական հոյակապ հեղափոխութիւնը,  
հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը, Ստալինը հարկով չեյին կա-  
րող չլիզելորբի դասակարգային գիտակցութեամբ աւելված, կոլ-  
տնտեսական դաշտերը հերկող սերմնացաններին, ալջուռնաբերա-  
կան գիզանտներ կառուցող և նրանց մեջ աշխատող հարվածային-  
ներին, դասակարգային պայքարը ռազմաճակատներում կյանքի և  
մահու կռիվ մղող կարմիր պարտիզաններին և կարմիր բանակա-  
յիններին, չեյին կարող ստեղծագործական նոր թափ չհազորդել  
հեղափոխական մասսաներին՝ յերգելու և գովերգելու նոր դարա-  
շրջանը, մեծ հեղափոխութիւնը:

Յիվ ընդհակառակը՝ դասակարգային սուր պայքարի պայման-  
ներում, յերբ հին աշխարհը զգրգալից կործանվում է, դասակար-  
գային թշնամին, հակահեղափոխութիւնը գործադրելով պայքարի  
բոլոր միջոցները՝ ոգտագործում է նաև ֆոլկլորը:

Դասակարգային թշնամին ամենուրեք մերկայարանոց չի  
դուրս գալիս պայքարի նա ունի վորձված միջոցներ և ուղղներ  
ներազգելու աշխատավորական մասսաների վրա, գլխադրելու սո-  
ցիալիստական շինարարութեան թափին: Դրանք գաղտնի ուղղներ  
են, ձգտյալ գլխակապոր միջոցառումներ: Մայայլ, գլխակապոր

հակահեղափոխութեան դիպուկ և սպառնչ բնութագրերն է տալիս  
ընկ. Ստալինը Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումում գյու-  
ղի աշխատանքի մասին արտասանած իր ճառում:

«Դասակարգային թշնամուն փնտռում են կոլտնտեսութեան-  
ներից դուրս, փնտռում են նրան դադանային դեմք, առեկլի ատամ-  
ներ, հաստ վիզ և ձեռքեր կարճ հրացան ունեցող մարդկանց կեր-  
պարանքով փնտռում են այն կուլակին, վորին մենք գիտենք  
պլակատները: Բայց այդպիսի կուլակներ վաղուց արդեն չկան  
գեանի յերեսին: Հիմիկիս կուլակները և յենթակուլակները, հի-  
միկիս հակախորհրդային տարբերը գյուղում, — դրանք մեծ մա-  
սամբ «հանդարտ», «քաղցրիկ», գրեթէ «սուրբ» մարդիկ են: Նրանց  
չպետք է փնտռել կոլտնտեսութեաններէն հեռու, նրանք նստած  
են հենց կոլտնտեսութեան մեջ և այնտեղ գրավում են պահեստա-  
պետների, հաշվապահների, բարտուղարների և այլ պաշտոններ...»

Շնորհ յերեք չեն ասի՝ «կորչեն կոլտնտեսութեանները»  
նրանք չկորչանալով լալ անանելու և դեմագոգիայի չենթարկվելու հա-  
մար պետք է ունենալ հեղափոխական աշխարհութիւնը, պետք է  
ընդունակ լինել թշնամու դիմակը պատուելու և ցույց ածուր կոլ-  
տնտեսականներին նրա իտեղական հակահեղափոխական դեմքը:

Ահա այդ «ճարպիկ թշնամին» է, վոր մեծ յեռանդով, հաճախ  
վորպէս կատակ, «անմեղ» կատակ, ֆոլկլորը միջոցով սերմանում  
է իր հակահեղափոխական դադախարները:

Հեղափոխական ֆոլկլորի զոյութիւնն արդեն մի անհերքելի  
փաստ է: Ընդամենը մի 10—15 տարում ստեղծվել է բավական  
հարուստ հետհոկտեմբերյան ֆոլկլոր: Համեմատաբար նոր են  
սկսել հավաքել և դրի առնել Այդ նոր ֆոլկլորից շատ բան արդեն  
անգառնալի կորստյան է մատնված, շատ բան էլ սիրողների վոչ  
հմուտ և գիտակ ձեռքով և դրի առնված, բայց և այնպէս ցարք  
հավաքած ու գրանցածն էլ բավական են նոր ֆոլկլորի մասին  
պաշարաւ տալու համար:

«Արդեն իտի կարելի չէ հրատարակել Լենինի մասին մի պատ-  
կառելի հասար ժողովրդական յերգերի, լեգենդների և գրույցների,  
վորոնք հայտնի յեն Խորհրդային Արեւելի ժողովուրդների աշխա-

ապօրուծյան լայն մասսաներին: Այդ յերգերն ու զրույցները յերգվում են Լենինի և Հոկտեմբերյան հեղափոխության մասին և հեռավոր հյուսիսում (ուսյակներ և լամուտներ), և՛ Միջին Ասիայում (ուզբեկներ, տաջիկներ, թուրքմեններ, ուզբերներ և այլն), և՛ Կովկասի լեռներում (ոսեր, կուրդներ, ավարներ և այլն), և՛ Գաղափարախոսում: Ժողովրդական յերգերները՝ աշուղները, բախշիւներն ու հաֆիզները տարածում են այդ յերգերն առլից առլի, դէպքից դէպք, դուռից դուռ: Այսպես ելին զրուս 1930 թվին Լ. Վ. Սոլովյովն ու Ա. Մ. Արշարունին ձեռքի տակ ունենալով խորհրդային ֆոլկլորի հավաքման և զբանցման մասին նախնական տվյալներ:

Վերջին տարիներս խորհրդային ֆոլկլորի հավաքումն ու զբանցումն այլևս դիպվածային ընտելի չէ կրում: Կյանքի յեն կոչված ֆոլկլորիստիկ հատուկ ընկերություններ, գլխավորապես դավաճադիստական ընկերություններ և խմբակները դժով: Մշակված են ընդարձակ ծրագրեր, կազմակերպվել են և դեռ շարունակվում են կազմակերպվել գիտարձայներ նոր ֆոլկլորը զբանցելու և այլն: Այլևս խորհրդային ֆոլկլորի հավաքումն ու զբանցումը դադարում է անհատ ֆոլկլորիստների կամ դավաճադիստ-սիրողների մասնավոր հետաքրքրության ընադավառ մնալուց և հատուկ ուշադրության և արժանանում պետական հիմնարկություններ և հասարակական կազմակերպություններ կողմից: ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիան և հատկապես նրան յենթակա Մարդաբանություն և Ազգագրություն Ինստիտուտը ֆոլկլորի սեկցիան<sup>2</sup> գլխավորում է և ղեկավարում նոր, խորհրդային ֆոլկլորի հավաքման և զբանցման գործը: Ներկայումս մեր լայնատարած Միություն ամեն մի հանրապետության, ինքնավար մարզի ամենահեռավոր անկյուններն

1 Л. В. Соловьев, „Ленин в творчестве народов востока“ (песни и сказания), со вступ. статьей А. М. Аршаруни, Москва 1930, յերես 7.

2 Фольклорная секция Института Антропологии и Этнографии Академии Наук Союза ССР.

բում անգամ նոր ֆոլկլորը հատուկ ուշադրության և արժանացել ֆոլկլորը ապագասովորդային և ապաքաղաքական բանավոր ստեղծագործություն չէ, վոր ավանդում է, արտացոլում և ինչ-վոր հին-հին դարերի հիշատակներ, ինչպես ջանում են ապացուցել բուրժուական ֆոլկլորիստները, այլ շեշտակի բնագծված դասակարգային և քաղաքական ստեղծագործություն: Ֆոլկլորն անպայման դասակարգային է, ապա ուրեմն ընդգծված քաղաքական մի հոգւր գործոմ, վորը մեծապես ողտադրծվում է ճակատող դասակարգերի կողմից ստեղծված քաղաքական, սոց.-տնտեսական պայքարի, հին ու նոր կենցաղի բախման ընթացքում:

Ֆոլկլորը այդ կարևոր նշանակությունը հասկանում են կուլակային-հակահեղափոխական տարրերը նույնպես և ողտադրծում են այն հեղափոխության դեմ: Թշնամին ճանդարտ, ճբաղցրիկ, գրեթե բոլորը՝ մարդկանց կերպարանքով վորպես բանվոր և կուլտեսական սողսկերով գործարան, կուլտեսություն, խորհտեսություն, այստեղ ել շինարարական տորոյալում կարողանում է իբ ճտեղծագործություններով, իր յուրատեսակ ֆոլկլորով ներարկել աշխատավոր մասսայի հետամնաց տարրերին հակահեղափոխական գաղափարներ, ազդեցություն ունենալ քաղաքականապես վոչ վերջնականապես ամրապնդված տարրերի վրա: Խորթ տարրերի իդեոլոգիայի սողսկած ազդեցություններն ուսումնասիրելու, մերկացնելու, ջախջախելու և մասսաների հեղափոխական գիտակցությունն ամրապնդելու նպատակով ել ֆոլկլորի հավաքումն և ուսումնասիրությունն առանձնակի կարևոր ու իստ արդիական քաղաքական-իդեոլոգիական նշանակություն է ստանում:

Մասսաները բանավոր ստեղծագործությունը՝ ջնայած նրա իստ դասակարգային բնույթին և քաղաքական-իդեոլոգիական նշանակության՝ նվաղ ուշադրություն է արժանացել գրականագիտություն և գեղարվեստական գրականության կողմից: Ֆոլկլորի նկատմամբ այդ անտարբեր և տարտամ վերաբերմունքին պետք է վերջ տալ: Բանավոր ստեղծագործության անձեռնմխելիության սկզբունքը, վոր յեռանդակին պաշտպանվում է բուրժուական ֆոլկլորիստիկայի կողմից, պետք է բացարձակապես մերժել և ակտիվ ներգործել ֆոլկլորային ստեղծագործության վրա, սրել պայքարն

ինչդեռ հակառակառնության բանահյուսական տարրերը և աշխատեցին պրոլետարական բանավոր ստեղծագործության փառաբանմանը Վորյակս ակտիվ ներդրածության միջոցներ Համամիութենական առաջին ֆուլկլորիստիկ կոնֆերենցիան<sup>1</sup> առաջարկում և հետևյալները՝ ա. խլատ ընտրությունը մասսայական յերգարանները հրատարակություն, բ. ազգիտ-հարգումը իրերգիայի և գեղարվեստականորեն հարստացում և ամուսնացում ֆուլկլորային յերգերը, գ. ցուցադրական համերգներ և ամուսնային ցերեկություն-յերգություններ նվիրված ֆուլկլորին, դ. ծավալումն ֆուլկլորի բնագրատություններ պարբերական թերթերը միջոցով և և. տեղական ֆուլկլորիստները համար ֆուլկլորի հավորման ծրագրի և հրահանգները հրատարակում:

Արդի ֆուլկլորը, մասնավորապես վրացական յերգն ու «վեպը», վորյակս մասսաների բանավոր ստեղծագործություն, ուղարկում և նաև գրեական թերթերի կողմից ժողովրդական վեպի ծագման մասին գոյություն ունեն բազմազան թերթեր, յինթադրություններ և կուսակցական Մեր որերում առաջ յեկած խորհրդային ֆուլկլորը, հատկապես լենինյան ցիկլը, լենինյան «վեպը» հնարավորություն և աղյուս մեղ քայլ առ քայլ հետևելու այդ «վեպի» ծագման, գոյացման և առաջնական դարգացման ետպներին, ծանոթանալ նրա կրած ազդեցություններին, փոփոխություններին և ներկա դրությունը, Լենինյան վեպի գոյացման կոնկրետ որենակի վրա հնարավոր և լուսաբանել նաև ընդհանրապես վեպի ծագումն ու առաջնական դարգացման հարցերը:

Խորհրդային ֆուլկլորը հետաքրքրական և նաև իր ձևի և դեղարվեստական պատկերավորման յերգանների (պրեմիսերի) տեսակետից: Այստեղ ընտրության արժանի յե նաև հին ու նոր ֆուլկլորի միաձուլման պրոցեսը, հին ձևի ու նոր բովանդակության համատեղման յերևույթը, հին արանքորմացիան նոր յերգիությունով համակված միջավայրում:

Թվարկածս գլխավորապես վրացական պրոլեթարներին, ինչպես և յերգում քաղաքական-հասարակական լինդերները առաջնակարգ

նշանակությունը և, հարկայ, բացատրվում այն բուն հետաքրքրությունները, վոր նկատվում և վերջերս մեր գրեականագրական հիմնարկություններում և առհասարակ լայն հասարակության մեջ դեպի նոր ֆուլկլոր: Արանով են բացատրվում նույնպես այն լայն միջոցառումները, վոր ծրագրվել են և կենսագործվում են նոր ֆուլկլորի հավորման և գրանցման բնագրավում:

Յեկ իրոք համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, ինչպես մեր քանի տարվա ընթացքում հավաքել ու գրանցել են ֆուլկլորային մի, պատկանելի հարստություն: Նորերս լույս տեսած խորհրդային ֆուլկլորին նվիրված «Советский фольклор» հանդեսը կազմել և միայն առաքեն լույս տեսած խորհրդային ֆուլկլորի մեղ լրվել բերլիոգրաֆիան (154 տուն), վորին մեղ լրագրական հոդվածները և պարբերականներում լույս տեսած ֆուլկլորային նյութերը գառ կան առանձին գրքերով հրատարակված ընդարձակ ժողովածուներ՝ բնագրեր և ուսումնասիրություններ:

Հավաքված և գրի առնված նյութերն ըստ հիմնական թեմաների բաժանվում են՝ ա. յերգեր, գրություններ և հեքայներ հեղափոխական դեկավարները՝ մասին, բ. յերգեր և գրություններ կուսակցական կուսակցության մասին, գ. յերգեր կոմյերիստություն մասին, դ. հակակրոնական ֆուլկլոր, և. պարտիզանական ֆուլկլոր, գ. կարմիր բանակային յերգեր և քաղաքային, և. կոլտնտեսական կրգեր և քաղաքային և բ. բանվորական քաղաքային, յակ ըստ ժանրերի՝ 1. քնարերգություն, 2. եպիգրական յերգեր, 3. գրություններ և ավանդություններ, 4. հեքայներ:

Այդ բերլիոգրաֆիան վերաբերում և միայն ուսերին կամ առև մամուլում հրատարակված խորհրդային ֆուլկլորին, սակայն քանի-քանի տարեկ հատոր կը կազմեն Միութայն բազմալեզու ժողովուրդների գրականություն մեղ լույս տեսած կամ ֆուլկլորիստիկ արվեստներում պահված խորհրդային ֆուլկլորի ժողովածուները:

<sup>1</sup> «Советский фольклор», статьи и материалы, выпуск I, Труды Фольклорной секции Института Антропологии и Этнографии АН СССР, Ленинград 1934, յերես 195—201:

<sup>1</sup> «Советская Этнография», 1934, №№ 1—2, յերես 205:

Ինչպես տեսնում ենք, գրի առնված խորհրդային ֆոլկլորը բանական մեծ է, սակայն նույնը չի կարելի ասել նրա վորակի մասին Բանահավաքները սայթաք ուղի յեն ընտրել ֆոլկլորիստիկայի բնագավառում։ Նրանցից վոմանք պարզ պատկերացում չունեն ֆոլկլորի սպեցիֆիկումը մասին, անխտրի գրի յեն առնում այն ամենը, ինչ վոր լսել են դուրդացու կամ բանվորի բերանից, անգամ յեթև սասցողներն ու պատմողները գրագետ են։ մյուսները հավաքում են նույնիսկ պարտիզանական հուշերը, մեմուարները, վոր հեռավոր առնչություն էլ չունեն ֆոլկլորի հետ, և համարում են այդ բոլորը ֆոլկլոր։ Մեմուարային գրականությունը վորքան էլ գեղարվեստորեն պատմված լինի, յերբեք չի կարող ֆոլկլոր համարվել Բացասելով նման նյութերի ֆոլկլոր լինելը, մենք չենք ուզում ժխտած լինել նրանց արժեքն ընդհանրապես և ֆոլկլորի ծագման ու զարգացման, ինչպես և ուսումնասիրության համար մասնավորապես Խորհրդային ֆոլկլորը նոր թիմատիկան այնքան է վոգեվորել բանահավաքներից և բանասերներից մի քանիսին, վոր նրանք պատրաստ են անգամ աջուղական ստեղծագործությունները ֆոլկլոր համարելու։ Վորպես թյուրեմացության կլասիկ մի նմուշ բնորոշ են Ա. Արշարունու և Ս. Վելտմանի հետեյալ խոսքերը՝ «Ճողովորդական միջնեղափոխական կայական եպոսը, վոր արտահայտվել է Սայաթ-Նովայի պոեզիայի մեջ, կյանքի յե կոչել բազմաթիվ հետևորդներ և նմանվողներ»<sup>1</sup>։ Այդ վճի հայկական եպոսի մասին են խոսում հեղինակները, վոր արտահայտվել է Անգրևովկասի մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Սայաթ-Նովայի պոեզիայի մեջ։ Մեր հանձարեղ աջուղը գերազանցապես բնորոշող է, մի բանաստեղծ, վոր գեղարվեստորեն նրբին ու խոր գրանվորելով մարդու հոգեկան աշխարհը, իր յերգերի ձևը, առաջավորությունը հասցրել է աննախընթաց կատարելության։


<sup>1</sup> А. М. Аршаруни и С. А. Вельтман, „Эпос Советского Востока“ (дореволюционные и послеоктябрьские мотивы), изд. Academia, Ленинград 1930, յերես 16:

Ա. Արշարունու և Ս. Վելտմանի ֆոլկլորիստիկ նման մարդանքները կարող են թյուրեմացություն մեջ գցել անփորձ ֆոլկլորիստներին։ Անհրաժեշտ է հստակ տեսակետներ մշակել, խնդիրները պարզ ու վորոշ դնել, վորպեսզի թյուրեմացություն և սայթաքման առիթներ չստեղծվեն այն հարյուրավոր բանահավաքների համար, վորոնք նվիրված յենանդուն հավաքում և ուսումնասիրում են խորհրդային ու նախխորհրդային ֆոլկլորը։

Խորհրդային ֆոլկլորի հավաքման ու գրանցման բնագավառում մեծ բաց պիտի համարել նաև այն, վոր գրանցողներից վոմանք հմուտ չլինելով գրանցման տեխնիկային կամ չհասկանալով ֆոլկլորի իսկական արժեքը, չզգալով նրա անարվեստ գեղեցկությունները, փոխանակ բառացի և ամենայն մանրամասնություններ, նրբություններով արձանագրելու ֆոլկլորի նյութը՝ բավականացել են յերգերի և զրույցների բովանդակության շարձյունությունները մյուսները ֆոլկլորային նյութը դիտել են վորպես մի հում նյութ իրենց գեղարվեստական յերկերի և ժուրնալային հոդվածների համար։ Ուսումնասիրողներից վոմանք այս ևս դիտել են վորպես ֆոլկլոր։ Այդ տիպի բանահավաքների աշխատանքները պետք է խոտելի համարվեն ֆոլկլորիստիկայի մեջ։ Սակայն այս նյութերն էլ ապարժեք չեն ֆոլկլորիստիկայի համար։ Պրանք կարող են արժեքավորվել սոսկ իբրև ուղեկցիներ, շոջավուկներ, վորոնք հմուտ ֆոլկլորիստին հնարավորություն կը տան ֆոլկլորային բուն աղբյուրներին հասնելու և այնտեղից, այդ նոր միջավայրից և ֆոլկլոր կրողներից քաղել և դիտականորեն գրանցել իսկական ֆոլկլորային արժեքները։

1106  
ՁԵԹ

Մեր նպատակը չի մանրամասն վերլուծություն յենթարկել Մյուսթյան մեջ հավաքված և գրել առնված խորհրդային ֆոլկլորը։ Մի այդպիսի վերլուծություն սազական էլ չկը լինի մեր ժողովածուի նման մի հրատարակության ներածության համար։ Այստեղ կը ցանկանայինք միայն հայկական նյութերի վերլուծության կապակցությամբ՝ հայ ընթերցողին թուուցիլ ծանոթություն տալ այն ֆոլկլորային նյութերի մասին, վոր վերջին տասնամյակում



հայաքվեի, դրի առնվել և հրատարակվել են ոռու մամուլում: Դրանց մեջ էլ գլխավորապես ծանրանալ Պորհրդային Արևելքի և Հյուսիսի ժողովուրդները ավելի արկակաճ ֆոլկլորային հոռուհները վրա: Պորհրդային ֆոլկլորի այս հատվածը բնորոշ է իր քաղաքական-հասարակական և դեղարվեստական արժեքներով: Մասնավորապես աչքի յեն ընկնում Լենին ու Հոկտեմբեր թիմաները:

Արք՝ Լինչ և Ինչպես են յերգում և պատմում «ասացողները» — ժողովրդական յերգիչներն և Լինչը մասսան Լենինի և Հոկտեմբերի մասին:

Պորհրդային ֆոլկլորը բնորոշ է իր ստեղծագործական-դեղարվեստական յեղանները (պրիոմ) եկլեկտիզմով: Այստեղ միահյուսված են հին ու նոր հեղափոխական հասկացողությունները, կենցաղային-սովորութեական գերապրուկները հեղափոխական դարաշրջանի նոր կենցաղի և նոր ձգտումները հետ. հին ձևերը, պատկերավորումները մեջ գրված են նոր բովանդակություն, յուրովի նոր գաղափարախոսություն:

Գոյն և վորոշում մարդու գիտակցությունը:

Դասակարգային հակամարտությունը, եկոնոմիկայի մեջ առաջացած խոշորագույն բեկումը, առանձնապես դուրդատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կոլտնտըրատման արագ ու հաղթական ծավալումը, հիմնական բեկում և առաջացրել աշխատավորության մտավոր աշխարհում, խորտակել և ու խորտակում և հին մտապատկերները, բայց և անպես խորհրդային ֆոլկլոր ստեղծող աշխատավոր հոծ մասսան դեռելու լրիվ կերպով չի ազատազրվել հին կեցության, սպա ուրեմն հնավանդ կենցաղի, սովորությունների ու բարոյական-գաղափարական ազդեցությունից: Դեռ արմատախիլ չի արել հնի մընացողները: Այս որվա անաղարտ պատկերն այդ է: Ակներև է մեծ բեկում: Այդ բեկումը համարում ենք սվյալ կոտպում նշանակալից և հեղափոխական:

Պորհրդային ֆոլկլորը ցայտուն կերպով առաջացել, գրեհորվել և այն միջավայրում, վորտեղ հին ֆոլկլորը խոր արմատներ է ձգել,

վորտեղ դարերը ընթացքում մշակվել ու կերտվել էյին ֆոլկլորային պատկերները, պատկերավորման յեղանակները, դեղարվեստական ձևակերպման ավանդները, վորտեղ բանահյուսությունը շարունակվում է մասսաների հոգեոր կուլտուրայի ամենակենդանի ստեղծագործական բնադավառը հանդիսանալ: Այդպես է Ռուսաստանի հյուսիսային մարզերում, հեռավոր Սլբիբրում, այսպես է նաև Բելուսուսիայում, Ուկրաինայում և հատկապես Պորհրդային Արևելքում: Հոկտեմբերյան հեղափոխությունը, վոր այնպիսի հզոր տեղաշարժեր, այնպիսի աննախընթաց սոցիալական և տնտեսական բեկում և առաջացրել ամբողջ Միութեան մեջ, մասնավորապես Պորհրդային Արևելքի սոցիալ-տնտեսական և կենցաղային հարաբերությունները մեջ, պարզ է, վոր ձևով հին, ավանդական, բովանդակութեամբ թարմ խորհրդային նորանոր սոցիալական և իդեոլոգիական ստեղծագործություններ պլտի առաջ բերել մասսաները մեջ: Նոր ֆոլկլորը մեջ հաճախ տեղ է գտել նախախորհրդային բանահյուսութեան տերմինաբանությունը. սյուտական-հերոսական և կրոնական անուանները համատեղված են հեղափոխութեան առաջնորդների հերոսների անուաները հետ. հին, բոլորի կողմից գիտակցված և հավանություն դտած մտապատկերներն, անգամ առասպելական-կրոնական դեկորները, մետաֆորները, մի խոսքով՝ ֆոլկլորային, վիպական բոլոր ատրիբուտներն ուղտագործված են նոր բովանդակություն տալու, նոր հասարակական հարաբերություններ պատկերելու համար:

Այսպիսի միահյուսումը մեծապես ոճանդակել է նոր ֆոլկլորի դեղարվեստական ձևավորմանը: Այստեղ կոնտամինացիոն կարգով համախմբված են խորհրդային թիմատիկայի շուրջը հին, տեղական-ավանդական հերոսական վիպի բոլոր դեղեցկությունները, ստեղծագործական յեղաններն ու յերանդները, և այսպիսով ստեղծվել է խորհրդային հեղափոխական հերոսական «վեպը», վոր մի քանի ժողովուրդների աշխատավորական մասսաների ստեղծագործութեան մեջ հասել է վորոշ դեղարվեստական կատարելութեան: Այդ տեսակետից մասնավորապես արժեքավոր է Պորհրդային



Արևելքի ժողովուրդները ֆոլկլորը Լենինի և Հոկտեմբերի մասին, վոր և կը վերլուծենք փոքր ինչ ընդարձակ և կոնկրետ:

«Ամենախոր և վառ, գեղարվեստորեն կատարյալ հերոսները տիպերն ստեղծված են ֆոլկլորի՝ աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործութեան մեջ»,—այսպէս բնութագրեց ֆոլկլորը Ա. Մ. Գորկին գրողները Համամիութենական առաջին համագումարում:

Յեւ իբրք, ֆոլկլորին հատուկ և հերոսական տիպերի հակիրճ և կենդանի բնութագրութեանն: Հերոսական տիպերն այստեղ դժգոհվում են վոչ թէ յերկարաշունչ դատողութեանն, այլ դարձանալի պարզութեամբ հենց գործողութեան մեջ: Այդպէս և մեր «Մասնա ծեւր» ժող. վեպի մեջ կենտրոնական հերոս Դավթի նկարագրերը, այդպէս և Պորճաշային Արևելքի նոր ֆոլկլորի, մասնավորապէս վեպերի մեջ, Լենինը, Հոկտեմբերյան հեղափոխութեան հանձնարող առաջնորդը: Այդ յերգերում գովերգված Լենինը դուրս գաւ, լեզուդար հերոս է:

Պորճաշային Արևելքի ֆոլկլորի մեջ Լենինը հանդես և դալիս վորպէս մի բացառիկ հերոս, վորն իր հարվածներն և ուզողում ամեն գուցնի ու տեսքի շահագործողներին՝ ցարի, ֆեոդալ-կալվածատերերի, բեգեր-աղայարների, հարուստների և ընդհանրապէս ամեն կարգի «չար ուժերի» դեմ: Յուրաքանչյուր առանձին դեպքում՝ նայած վոր զրջանում, վոր ցեղերի և ժողովուրդների կողմից են հորինվել, պատմվել ու յերգվել այդ լեզուներն ու յերգերը՝ Լենինի կոլիւր «չար ուժերի» դեմ տեղայնացվել և, ընդունել այս կամ այն կոնկրետ ձևը, լրիվ պահպանել տեղային կոլորիտը, մի խոսքով՝ արտնայալիկ և ընդհանրի հարազատ մտապատկերներով և գեղարվեստական ստեղծագործական յեղաններով:

Լենինը զանազան գերերում և հանդես դալիս Մերթ նա վորտորդ և, ճնեռ ու աղկղը՝ ձեռքին, մերթ ձկնորս ուռկանը նետելիս, մերթ խաշնարած վոչխարները և տավարը հոտերն ու նախիրը հանդում ու լեռնագաղտերում արածացնելիս, մերթ վորպէս ընչազուրկ, հողազուրկ դեհկան ու մաճկալ, վոր հերկում և խոպան

գաշտերը, մերթ վորպէս խղախ կողակ և այն, և այն ինչ կերպարանք ել նա ընդունած լինի, վոր դերում ել հանդես յեկած, մեկ և, նա ամենուրեք պաշտպանում և չքալորներին, շահագործվող ժողովրդական զանգվածները: Նրա հարվածներից «չար ուժերը» սարսափում, փախչում են կամ կործանվում, վոչնչանում: Ամենուրեք նա պաշարում և շահագործված «բժխարտ ժողովրդի» բախտավոր ապագայի համար:

Լենինի մասին հյուսված այդ լեզուներին և յերգերին հատուկ և մի ընդհանուր եպիքական դիմ: Նա մի հակա յե կամ մի դյուցազն, մի հերոս՝ ոճոված ֆիզիկական վիրխարի ուժով, միաժամանակ նա իմաստուն և յեվ հմարագետ, բարեխիտ յեվ արդարադատ: Լենինը շուռ և տալիս վիթխարի ժայռեր, խղախաբար նետվում և կըզվի ամենավտանգավոր ճակատամարտեր, հերոսաբար մարտնչում և տարերքի դեմ, մարդկային կյանքը փրկելու համար նետվում և փոթորկալից և ալեկոծ ծովերը, հաղթահարում և ամեն տեսակի սարսափելի խոչընդոտներ ու արգելքներ և այն: Այս բոլորով հանդերձ՝ նա յերեք հողեպես չի ընկճվում, չի վհատվում. միշտ ուրախ և, զվարթ, միշտ վստահ և իր ուժերին և լավատես: Ժողովրդական հերոսի բնավորութեան ամենաբնորոշ դժիւրն են վերոհիշյալները: Աշխատավորական մասսանքը ամենամեծ ճգնաժամների ժամանակ ել հոռետես չեն դառնում: Լավատեսութեանն և, վոր մասսաներին տոկունութեան և սովորեցնում, պայքարի դուրս բերում ամեն տեսակի թշնամիները դեմ, հաղթութեան, վոգերութեան ներքնում նրան: Ֆոլկլորի յուրահատուկ այդ դժի վրա յե հրավիրում Ա. Մ. Գորկին խորհրդային գրողները ուշադրութեանը, յերբ ասում և.

„Очень важно отметить, что фольклор совершенно чужд пессимизма, невзирая на тот факт, что творцы фольклора жили тяжело и мучительно, рабский труд не был обессилён эксплуататорами, а личная жизнь бесправна и беззащитна. Но при всем этом коллективу как-бы свойственно сознание его бессмертия и уверенность в его победе над всеми враждебными ему силами“.

Անմահութեան այդ գլխապետութիւնը, միշտ հաղթելու վստահութիւնն ու լավատեսութիւնն է, վոր կարմիր թելի պէս անցնում է նաև խորհրդային Ֆոլկլորի, մասնավորապէս լեհիկայանցիկ միջով: Լեհիկան ու նրա գործը յերբեք չեն պարտվել. նրանք անմահ են և հաղթանակող:

Այս տեսակետից վերին աստիճանի բնորոշ և ուստակների (սամոյեղ) դրույցը Լեհիկան ու նրա գործի մասին:

Ծեր ուստակը խրատում է, կյանքի ու պայքարի դաս է տալիս իր վորդուն: Նա պատմում է Լեհիկան մասին: Ծերունի ուստակի տեսողատում յերկտասարդ Լեհիկան էլ իրենց նման ապրել է թունդրաներում, «олений пас, бил зверей, совсем легко, шутя бросал аркан на 40 саженой» [խելջերուներ եր արածայնում գազաններ վորսում, բոլորովին թեթև, կատակով ողապարանը նետում 40 սածեն]:

Հյուսիսային դաժան դոյամարտում դժվար է միշտ հաղթանակել: Այստեղ բացի սովորական թշնամիներէրց, հենց ինքը՝ բնութիւնն ու տարերքը մարդու մեծագուշտ թշնամիներն են: Այդ պայքարում պետք է համառ լինել և շինտովել: Այդպէս է յեղել յերկտասարդ Լեհիկան: Նա խիզախ է յեղել, վստահ իր գործին և այդ պատճառով էլ միշտ հաղթանակել է:

Ծերունին պատմում է.

„Однажды Левин вышел в море  
Тюленей бить (достать их жир);  
Вдруг шторм сильный—горе, горе!—  
Унес человека в морскую ширь.  
Затихло море, вновь серчалю,  
И лед кругом сковал челнок.  
А Ленин ел моржовье сало,  
Ночей не спал и весь продрог.“

<sup>1</sup> Այս յերդը հենց առաջին հայացքից անաղարտ Ֆոլկլորի ապավորութիւնն չի թողնում: Ինչպէս հավաստիացնում է ընկերջարունին այս յերդը գրական վերամշակութեան և յենթարկել Ա. Մարտուկին:

Так плыл он долго, долго очень,  
А сколько плыл—не знал никто.  
Лед тоньше стал и менее прочен,—  
Заплыл туда он, где тепло.  
Собрав с трудом остаток сил,  
Взмахнул веслом на солнце прямо—  
Сын Яамас-хе-хе был упрямый—  
И вот до берега доплыл.  
Ему навстречу звери и люди:  
—Приди к нам в чум и отдохни,  
Потом с тобой тягаться будем—  
Покажешь силы нам свои.  
А Ленин им:—Я хоть устал,  
Но бить вас хватит сил моих.—  
Стрелюю взор, скривил уста,  
Аркан накинул на тронх,  
Связал и бросил в моря пасть;  
Топор метнул—двоих рассек,  
И не успел один упасть,  
Копьем пронзил его в висок...“<sup>1</sup>

[Լեհիկան նավակով ծով է դուրս գալիս: Նա վորսում է ծովացուկեր և ծովաշներ: Սաստիկ փոթորիկ է բարձրանում: Անջուն գլխերն են անցնում. ցրտահար Լեհիկան անզաղրում թիավարում է զեպի ափ: Վերջապէս հասնում է նա այնտեղ, ուր սառուց չկա և տաք է, և վերջին ուժը հավաքելով՝ դուրս է գալիս ափ: Նրան ընդառաջ են գալիս գազաններ և մարդիկ:

— Արի մեր վրանն ու հանգստացիր, չեսո մենք քեզ հետ կը չափինք. Յույց կը տաս դու ուժերդ մեզ. Լեհիկան էլ ասում է.— Յես, ճիշտ է, հոգնել եմ, բայց ուժս կը հերբի ձեզ հարվածելու:

<sup>1</sup> Аршаруни, հ. ա., յերես 11—12:

Հայացքը նեւտ, բերանը ծռեց,  
Ողապարանը պցեց յերեքի վրա,  
Կապուտեց ու պցեց յերախը ծովի:  
Կացին նեւտեց, յերկախն կխսեց,  
Յեզ մեկը դեռ պեախն չեւ գլորվել,  
Ներգախով ծակեց քուները նրա]:

Լենինը հաղթում է ամեն դուշնի ու տեսքի թշնամիներին.  
սպանում է մասսաներին կողոպտող ազահ վաճառականներին,  
կողոպուտը հեռ է խլում է բաժանում չքավորներին, ապա տե-  
նելով, վոր բոլոր հարստահարողները վերացել են, խալ «չարքերը»  
չքացել, հանգիստ մեռնում եւ Յերկինքում ցուում է մի նոր վառ  
աստղ—Լենինի աստղը: Ծերուկ ուսույակը պատմելով այս բոլորը,  
վերջացնում է իր խոսքը հետեյալ բարեմաղթութունով.

„И целью всех своих стремлений  
Я вижу то, Хасаваню (мой сын),  
Что станешь ты таким, как Ленин,  
И в небе дашь свою звезду“.<sup>1</sup>

[Յեզ նստատակը քո բոլոր ձգտումների  
Տեսնում եմ յես այն, խասավանդու (իմ վորդի),  
Վոր դու Լենինի պես մի մարդ կը դառնաս  
Յեզ յերկինքում քո աստղը կ'ունենաս]:

Այսպիսով Լենինն ընդամենը մի տասնամյակի ընթացքում  
դարձել է հյուսիսային այդ փոքրեկ ժողովրդի կյանքում, նրա  
հոգեւոր աշխարհում այն դերադուշն հերոսը, վորն պետք է նման-  
վել, վորի շավղով պիտի գնա յուրաքանչյուր ուսույակ, յեթե նա  
ուզում է անմահութեան հասնել, իր «վառ աստղն ունենալ յերկին-  
քում»: Լենինն ուսույակների իրեախն եւ նա բռնում է նախկին հե-  
րոսների, կիսաստղածների տեղը:

Ահա մի յերդ կու «Գեհեկան է Լենին» այդ յերդի վերնադիրն  
է: Գրի յե առնված 1925 թ. հունիսին, Կարա-Պուրպա դըրադում:

<sup>1</sup> Аршаруни, հ. ա., յերես 12:

Այստեղ Լենինը վոչ միայն չքավոր դեհկաններին, ընչադուրկ աշ-  
խատավորութեան պաշտպանն է ընդդէմ շահագործողներին, այլ  
նրա պատրաստակամ ողնական ու արագահաս է հմուտ բժիշկը:

„Если Ленин видел, что на дехкана напал грабитель,  
То Ленин брался за меч  
И защищал дехкана, не жалея собственной жизни.  
Если Ленин видел, что у дехкана заболело дитя,  
То он сам брался за лекарство  
И спасал отцу ребенка.  
Если Ленин видел, что у дехкана тяжелая работа,  
С которой трудно справиться одному,  
То он брался за кетмень и помогал дехкану в работе  
Таких, как он, никогда не было нигде,  
Таких великих и простых,  
Занимающих самое высокое положение  
И не гнушающихся сесть за один стол с бедняками.  
Поэму дехкане полюбили Ленина  
И реки слез пролила после его смерти“.<sup>1</sup>

[Յեթե Լենինը տեսնում էր, վոր դեհկանի վրա հարձակվել է  
թալանչին,

Նա իսկույն իր ձեռքն էր առնում թուրը  
Յեզ պաշտպանում էր դեհկանին, չխնայելով իր կյանքը:  
Յեթե Լենինը տեսնում էր, վոր դեհկանի յերեխան հիվանդ է,  
Նա ինքն էր վերցնում դեղը  
Յեզ վերկում էր յերեխային հոր համար:  
Յեթե Լենինը տեսնում էր, վոր դեհկանի աշխատանքը ծանր է,  
Վոր մեծ-մեծակ նա չի կարող դուրս բերել,  
Նա իսկույն վերցնում էր բրկն է ողնում դեհկանին:  
Նրա նմանը չի յեղել վոչ մի տեղ է յերեքը,  
Այդքան մեծ է այդքան պարզ ու հասարակ,  
Վորն այդքան բարձր դիրք ունի:

<sup>1</sup> Л. Соловьев, հիշ. աշխ., յերես 18, 85—86:

Յեզ չեք զզվում չքավորի հետ սեղան նստել:  
Դրա համար դեհկանները սիրեցին Լենինին  
Յեզ արցունքի գետեր հոսեցին նրա մահից հետո]:

Դեհկանի սայլը կտրվել է սայլապանը շինում է ու յեր-  
գում:

„Мне никто не поможет.

Но если бы со мной ехал Ленин,

Он помог бы мне и сделал бы арбу лучше новой,

Потому что он все умел делать“<sup>1</sup>.

[Ինձ վոչոք չի ոգնիլ:

Բայց յեթե հետս Լենինը լինեք,

Նա կ'ոգնեք ինձ և ինձ համար նորից կ'լավ սայլ կը շինեք:

Վորովհետև նա կարողանում էր ամեն ինչ անել]:

Լենինն ամենակարող է և ամենազետև նա կ' իսկական լաշ-  
նարած է, և՛ դաշտերն հերկող դեհկան, և՛ անվախ վորսորդ ու  
ձկնորս, մի խոսքով՝ Խորհրդային Արևելքի ժողովուրդների պատ-  
կերացման մեջ ամեն ինչ, առանց վորի չէ կարելի յերեակայել:  
աշխատավորության բարորությունը:

„Ленин, Ленин... Мы без тебя,

Как рой пчел без матки“<sup>2</sup>.

[Լենին, Լենին... Առանց քեզ մենք,

Առանց պարամայրի մեղուներ ենք]:

Գլխավորելով աշխատավոր դուրսագոյություն ազատազրկան.  
պայքարը՝ նա անարկու ձայնով անհաշտ կովի յե կոչում քնչա-  
զուրկ մասսաներին, վորպես «մարդտեր», կյանքի, պայքարի, խա-  
ղաղ աշխատանքի ու բախտավորության պատգամներ և ապրի-  
շահագործման դաժան լծի տակ տառապող մարդկությունը:

<sup>1</sup> Л. СОЛОВЬЕВ, հիշ. աշխ., յերես 94:

<sup>2</sup> Л. СОЛОВЬЕВ, հիշ. աշխ., յերես 93:

„Люди, разогните спины!

Люди, откройте уши!

Слушайте мое слово!

И страшно было слово пророка для богачей,

Но радостно было оно для бедных:

—Смерть хозяевам вашим!

Вам их халаты!

Вам их кибитки!

Вам их хлеб!

Не будет это против закона,

Ибо вашими руками заработано это“<sup>1</sup>.

[Մարդիկ, ուղղեցէք ձեր թիկունքը,

Մարդիկ, բացէք ձեր ականջները:

Լսեցէք իմ խոսքը:

Յեզ սարսափելի յեր մարդարեկի խոսքը հարուստներէ  
համար:

Բայց ուրախալի յեր այն չքավորներէ համար:

—Մահ ձեր տերերին:

Նրանց խալաթները ձեզ:

Նրանց կիպերը ձեզ:

Նրանց հացը ձեզ:

Յեզ դա որենքին հակառակ չի լինի,

Վորովհետև այդ ամենը ձեր ձեռքերով է աշխատած]:

Պայքարի ու վերկուծյան ուղին պատգամող այդ նոր «մար-  
դերն»—Լենինը՝ միայն քարոզիչ չէ, միայն խոսքի հերոս չէ, այլ  
դերազանցապես գործի մարդ, վորովհետև նա ինքն է իր պատ-  
գամները կենսագործում: Նա մարտի յե յերնում չտեսնված հզոր-  
ությամբ, դերմարդկային խիզախությամբ:

„Огнем и мечом прошел пророк по полмиру,

И оставил за собою разоренные пепелища богачей;

И вел бедняков вперед и вперед,

<sup>1</sup> Անդ. յերես 76:

Огненной рукой показывая на восток...  
И они дошли до конца и нашли  
Царство без царя, где была свобода  
И где царем были—законы Ленина“.<sup>1</sup>

[Հրով ու սրով անցավ մարդարեն աշխարհի կեսը,  
Յեվ իր յետեր թողեց հարուստներն ավերված ոջախները-  
Յեվ նա առաջնորդում էր չքավորներին դեպի առաջ,  
Հուր ձեռքով ցույց տալով դեպի արևելք...  
Յեվ նրանք գնացին մինչև վերջը և դոտան  
Անթաղավոր մի թաղավորություն, ուր աղատ էր,  
Յեվ վորտեղ Լենինի որենքներն էյին թաղավորում]:

Իր իմաստուն կյանքով ու հաղթական դործով անհաշտ դա-  
սակարգային պայքարի փայլուն որինակը ցույց տալուց հետո՝ նա  
անհայտանում է կամ մեռնում: Յերկրորդ դեպքում՝ նա կտակում  
և չվոչնչացնել իր մարմինը, այլ անաղարտ պահել, աչքի ընկնող  
մի բարձրության վրա դնել, միշտ այցի դար, վորովհետև՝

„В теле,—сказал он,—частица моего духа...  
И если кто сробеет в великой борьбе,  
Пусть подойдет ближе к моему телу;  
И опять гневом запыхает сердце его,  
И преисполнится он смелости,  
И сильным будет дух его,  
И опять он пойдет на борьбу,  
Храня в памяти мои огненные заветы.  
И уши его в бою будут слышать  
Мои призывные слова“.<sup>2</sup>

[Մարմնին մեջ,—ասաց նա,— իմ վոգու մասնիկը կա.  
Յեթի մեկը վհատվի մեծ կռվում,  
Թող մոտենա իմ մարմնին.

<sup>1</sup> Անդ, յերես 77:

<sup>2</sup> Անդ, յերես 78:

Յեվ նորից նրա սիրտը կը վառվի գայլույթով,  
Յեվ կը լցվի նա խիզախությամբ,  
Յեվ հզոր կը դառնա նրա վոգին,  
Յեվ նորից նա կը գնա կռվի,  
Պահպանելով իր հիշողության մեջ իմ պատգամները  
բոցեղեն-

Յեվ կռվի մեջ նրա ակաջները կը լսեն  
Իմ խոսքերը մարտակոչ]:

Ֆերզանի դեղջուկը չի հավատում, վոր Լենինը վախճանվել է-  
նա չի հաշտվում այն մտքի հետ, վոր Լենինի նման մի հերոս կա-  
րող է ընդմիշտ հեռանալ աշխատավորությունից, կարող է մեռ-  
նել: Վնչ նրա անհետանալը ժամանակավոր ընույթ է կրում: Լե-  
նինի «մահը», նրա կարծիքով, սոսկ մի դատարկ բառ է Լենինը  
մահ չունի, Լենինը հավիտենական է: Այլարտեղով իր «սուրբ դոր-  
ծը», նա ժամանակավորապես անջատվել է իր սիրելի աշխատավո-  
րությունից և հանգստանում է «լուսնային աշխարհում»:

„—Но зорко смотрит на землю и в мысли врагов—  
Не начинается ли снова горе и рабство.  
И если враги снова возьмут верх,—  
Опять придет он, пламенный и сильный,  
На этот раз еще более гневный и беспощадный,  
И снова пойдут за ним миллионы,  
Сотрут с лица земли все  
И снова все построят.  
И будет мир светел и счастлив“.<sup>1</sup>

կամ

„И если кто обидет бедного дехкана,  
То он встанет и железной рукой схватит обидчика,  
И будет с ним жесток, как тигр“...  
Ինչն: Վորովհետև՝

<sup>1</sup> Անդ, յերես 64:

<sup>1</sup> Անդ, յերես 64:

„Ленин любит правду,  
Ленин любит бедняков,  
Ленин дал им власть и свободу,  
Ленин утер слезы женщин,  
Ленин, как солнце, обогрел землю“<sup>1</sup>.

[Բայց սուր աչքով դիտում ե նա յերկիրն ու  
[Թշնամիներն մաքերը,

Չի սկսվում արդյոք նորից վիշտն ու ստրկութիւնը  
Յեզ յեթե թշնամիները հաղթեն նորից,—  
Կրկին կը դա նա, բոցավառ և հզոր,  
Այս անգամ ավելի ցասկոտ և ավելի անողորմ,  
Յեզ նրա յետեից կը դնան նորից միլիոնները,  
Կը սրբեն յերկրի յերեսից ամեն ինչ,  
Յեզ նորից կը շինեն ամեն ինչ,  
Յեզ աշխարհը կը դառնա լուսավոր ու բախտավոր]<sup>1</sup>  
կամ՝

[Յեզ յեթե մեկը նեղացնի խեղճ գեհկանին,  
Նա վտառի կ'եննի և յերկաթի բաղկով նեղչին կը բռնի,  
Յեզ նրա հետ վազքի սկս դաժան կը լինի]:

Ինչո՞ւ Վորովհետե՞

[Լենինը սիրում ե ճշմարտութիւնը,  
Լենինը սիրում ե շքավորներին,  
Լենինը տվեց նրանց իշխանութիւն և ազատութիւնը,  
Լենինը սրբեց արքունիները կանանց,  
Լենինը, վորպէս արեւ, տաքացրեց յերկիրը]:

Լուսեայն այդ աշխարհում, գեհկանի պատկերացրած «ղբախտում» Լենինը չի մոռանում յերկրի ու յերկրագործի կյանքը: Նա այստեղ ել չի կարողանում անտարբեր պահանատեսի դերում մնալ, այլ շարունակում ե յերկրում սկսած դործը, իր սիրած պայքարն ընդդէմ շահագործողներէ: Նա մաքրում ե «ղբախտը» շահագործողները, հարուստները հողիներէն:

<sup>1</sup> Անդ, յերես 88:

Ահա մի շարք պատկերներ Լենինի գործողութիւններէն:  
Լավում ե վորոտի ձայնը, զըրբըզը համարում ե այն Լենինի  
աճեղ ձայնի արձագանք. փայլատակում ե կայծակը,—

„Это молния из глаз Ленина,  
Выгоняющего из рая души богачей.  
Сейчас в рай большой шум—  
Ленин бьет всех палкой“<sup>1</sup>!

[Այդ կայծակը Լենինի աչքերիցն ե,  
Վոր դուրս ե բշուժ դրախտից հարուստները հողիները:  
Իրախտում հիմա մեծ աղմուկ ե,—  
Այդ Լենինն ե դավադանով ծեծում բոլորին]:

Լենինը դեռ վերադառնալու յե, յերբ պատեհ ժամը հասնի, յերբ մասսաները—զահագործվող ժողովուրդը նրա ներկայութեան անհրաժեշտութիւնը զգա, յերբ նորից բարձրացնի ընդդէմ շահագործողները պատերազմի դրոշակը: Այս միլեկնուէն հավատքը դոյութիւն ունի շատ ժողովուրդները առասպելները և վիսկերի մեջ լուսավոր հերոսները մասին: Այս հավատքն ե, վոր մինչև Հոկտեմբերյան հեղափոխութիւնը վողեորել և սրտապնդել և կազակներին, Ռեալի ու Վոլգայի աշխատավորներին, յերբ նրանք ուր ավուր սպասում եյին Յեմելյան Պուդաչեին և Ստենկա Ռադլինին, վորոնք դուրս պլտի դային իրենց քարայրից և վերկութիւն բերեյին աշխատավորութեանը<sup>2</sup>: Յեզ պատահական չեն այն յերդերը, վորոնց մեջ Լենինը կերպարանափոխված Պուդաչեվը կամ Ռադլինն ե, վոր յեկել և շարունակելու և ավարտելու նրանց սկսած գործը:

Ինչպէս ականում ենք՝ «Լենինյան ֆոկլորը», մասնավորապէս նրա վերջապահ և վերջերգային հատվածը, գերազանցապէս դուրապական ստեղծագործութիւնն ե:

<sup>1</sup> Անդ, յերես 94:  
<sup>2</sup> Հմմտ. սեր ժող. վեպի Պատիկ Մհերի հետ:

Լենինյան ֆոլիորային ցեղի հիմնական և բնորոշ գծերից մեկն էլ նրա կրոնական յերանդավորումն է:

Նախահեղափոխական Ռուսաստանի նահապետական և կիսանահապետական ժողովուրդները և ցեղերը կյանքում կրոնը հիմնական դործոններից մեկն էր: Կրոնով էր սողորված զբանց նրանք ու կայրը, կրոնով էր սրբադործվում ամբողջ անտեսական կյանքն ու պայքարը: Յուրաքանչյուր անտեսական-սոցիալական յերևույթ սկսվում էր, ղեկավարվում և ավարտվում կրոնական ծխակատարությամբ՝ աղօթքով ու արարողությամբ: Կրոնը, կրոնական նախապաշարունակներն իրենց ուժեղ կնիքն էյին դրել այդ ժողովուրդները ամբողջ մտավոր կյանքի վրա, յերանդավորել էյին նրանց վերնաշենքային կարգի բոլոր յերևույթները:

Կրոնը դադափարները, արամադրությունները և գործողությունները շատ թե քիչ կառուցիկ մի սխտեմ էր Գաղափարները կազմում են միթոլոգիա (առասպելաբանություն), արամադրությունները՝ կրոնական զբացմունք, գործողությունները՝ պաշտամունք», —ասում է Գ. Վ. Պրեխանովը:

Տիրող դասակարգերը շատ լավ են բմբունել այդ նրանք հաճախ կրոնական զբացմունքներից զուրկ լինելով հանդերձ՝ ոգտագործել են կրոնն էլ ավելի շահագործելու, էլ ավելի ամբացնելու աշխատավորության կապանքները:

Պրոլետարիատը կրոն չունի: Նա կտրականապես մխտում է, բացասում այդ սեակցիոն դադափարախոսությունը: Նա կարիք չունի «աստված» դադափարի, վորը նրան պիտի ողնի, մխիթարի և սփոփի: Նա ինքը տեր կը դառնա արատադրության բոլոր պրո-

ցեաներին, կը նվաճի բնությունն և իր անմիջական ղեկավարությանը կ'ենթարկի բոլոր հասարակական ուժերն ու կը ստեղծի յերկրիս վրա մարդուն վայել, կրոնական, «աստվածային խավարից» ազատ մի նոր կյանք, յերազական «յերկնային դրախտ» փոխարեն՝ յերկրային, նյութական իսկական դրախտ: Առասպելաբանության փոխարեն՝ ճշգրիտ գիտություն, կրոնական զբացմունքները և արամադրության փոխարեն՝ դասակարգային վառ ղիտակցություն, պաշտամունքը փոխարեն՝ հեղափոխական գործելակերպ, —ասա սրանք են կազմում պրոլետարիատի դադափարախոսության հիմնական սյունիքը:

Սակայն ինչ ենք տեսնում Հոկտեմբերյան հեղափոխության և նրա առաջնորդ Լենինին նվիրված ֆոլիորը մեջ:

Այստեղ հեղափոխական նոր դադափարները մխտեղվել են հին, նախահեղափոխական հակացողությունները հետ, նոր պայքարն արտահայտվել է հրն, կրոնական մտապատկերներով, առասպելաբանության մեջ հնուց ի վեր ստեղծված մտապատկերներով:

Սորերգային Արեելքի ժողովուրդները ֆոլիորը մեջ Լենինը «խալիֆա» յե պատկերացված, «ալլահի մեծ մարգարն, բնարյալը», Հոկտեմբերյան հեղափոխությունը — «բոյուք բայբամ» լենինյանբուրճիկյան հին դավրդիան՝ «մյուրիդներ» և այլն:

Լենինը տաջիկները և ուզբեկները նոր առասպելների և զրույցների կենտրոնական հերոսը հանդիսանալով հակազդվում է նրանց վիպաշխարհի հին ներկայացուցիչներին, դարերը ընթացքում կիսաստվածների շարքը գաղված հերոսներին՝ Ալուն (ուզբեկները ահարկու փահլիվան), ահեղ թամուրլին ու Չինգիզ խանին, հեքաթային դարձած Իսքանդարին (Աղեքսանդր Մակեդոնացի) ուսա Նիկիոյայն (Նիկիոյա II արյունարբու ցարին) և ուրիշներին: Լենինն իր դադափարներով, իր գործով իր պայքարով նախկին հերոսները ամենացայտուն հակապատկերն է:

Ահա թե ինչ են յերգում Լենինի մասին Ֆեբդանի ղեկանները:

„Он снова посеял свет там, где Николай сделал мрак.  
 Он смел пепел с пустынь, обеспокоенных Тамерланом.  
 Он построил города, разрушенные Чингиз-ханом...  
 Воины: Тамерлан, Чингиз-хан, Искандер и Николай,  
 Если видели свет,—делали мрак;  
 Если видели сад,—делали пустыню;  
 Если видели жизнь,—делали смерть...  
 Ленин, если видел мрак,—делал свет;  
 Из пустыни делал сад, из смерти—жизнь,  
 И был он могучее всех этих воинов, соединенных в одно,  
 Потому что один, в восемь лет, построил,  
 Что они разрушали тысячу лет“...<sup>1</sup>

Նա նորից լույս սփռեց այնտեղ, վորտեղ Նիկոլայը խավար էր  
 Կարճրեւել.  
 Նա ավլեց Լենդթամուրի կողմից անբերրի դարձրած անապատները  
 մոխիրը  
 Նա ջինեց Չինգիզի խանի կողմից ավերված քաղաքներն  
 Ռազմիկներ՝ Լենդթամուրը, Չինգիզ-խանը, Իսկանդարն ու  
 Նիկոլայը՝

Յեթե լույս էլին տեսնում,—խավար էլին դարձնում.  
 Յեթե կյանք էլին տեսնում,—մահ էլին դարձնում...  
 Լենինը յեթե խավար էր տեսնում,—լույս էր սփռում.  
 Անապատը դարձնում էր այգեստան, մահը՝ կյանք.  
 Յեկնա ավիլը հզոր էր այդ բոլոր ռազմիկներից միասին վերցրած,  
 Վորովհետև նա մենակ կառուցեց ութ տարում այն ամենը,  
 Ինչ վոր նրանք ավերում էլին հազար տարի շարունակ):

Վերջապես Լենինը ավանդ ընարյալ Մահամադից սերած Խու-  
 դոյ-Նոլայի ժառանգորդ այն հերոսն է, վոր անհաշտ կռիվ մղելով  
 շեյթանին և նրա ծնունդ նենդ ու խարդախ Քուչուկ-Ազամի դեմ,  
 սպանում և մարդկության—առավել ժողովրդի այդ դույզ թշնա-  
 միներին, ազատում և նրանցից առասպելական «ոկ-տաղը» (սպի-

Անդ, յերես 740

տակ քարը), «կըզրլ տաղը» (կարմիր քարը) և Մահամադին նվի-  
 րած ավանդի մատանին, և այս կախարդական լրերի մ. ջոցով  
 վերկում դեհկան ժողովրդին: Այս առասպելական կովը մեջ Լենինը  
 մենակ չէ. նրան ողնության և հասնում է՝ ընտելյունը, և՛ տարեր-  
 քը, և՛ կենդանական աշխարհը:

Այս գեղեցիկ առասպելից բերենք մի հատված:

„Гремел гром. Горы кидали камнями направо и налево,  
 надеясь хоть случайно задеть Кучук-Адама. Молнии сыпа-  
 лись дождем, но Кучук-Адам спрятался за спину Ленина и  
 был неуязвим.“

Изнемогал уже Ленин в тяжелой, неравной борьбе, и пот  
 крупными каплями капал с его лба.

И одна капля случайно упала на руку Кучук-Адама и  
 прожгла его руку насквозь. Взмахнул от боли рукой Кучук-  
 Адам, кольцо слетело с его руки, и стал он видимым.

Обратили на него ярость свою горы и тучи, били его  
 камнями, жгли молниями, и пал Кучук-Адам погребенный под  
 скалами.

Снял с Кучук-Адама Ленин пояс богатыря Али, достал  
 кизыл-таш и ок-таш и пошел по горам освобождать землю.

Горы давали тень ему от зноя, и солнце умерило пыл свой  
 и не накаляло камней, чтобы не жгли они ноги Ленина.  
 Когда он хотел пить—небо проливало дождь; когда он хотел  
 есть—барсуки приносили ему пищу и джейраны давали ему  
 молоко.

Так шел он пять дней и остановился поспать в одном  
 ущелье.

Когда он заснул, очнулся Кучук-Адам, лежавший у ручья,  
 и, собрав стаю демонов, обманул бдительность гор и пошел  
 убивать Ленина.

Горы не заметили его. Он пронесся над горами. Небо  
 спало и не заметило его. Но заметил его маленький воробей.

Он напряг всю силу своих слабых крыльев и полетел к Ленину быстрее ветра предупредить его об опасности.

Он прилетел раньше Кучук-Адама, предупредил Ленина — и упал мертвым.

Ленин разбудил горы, натер меч свой поясом Али, и стал меч тяжелым и огненным, а когда налетела на него черная стая, то горы сдвинулись и образовали крышу, и некуда было бежать демонам, а огненный меч разил их и жег.

Пали все демоны в этом ущелье, а Кучук-Адам, превратившись в червяка, прополз в щель между гор и убежал от гнева Ленина.

Когда утром взошло солнце и растопило мрак в ущелье, нашел Ленин среди трупов демонов труп маленького воробья, зарыл его в землю и, поцеловав могилу, сказал горам:

— Воздвигните над телом его гробницу великую и великолепную, ибо мало было тело его, но велик дух, и жизнь свою он отдал за общее счастье.

Сдвинулись горы над могилой воробья, и ушла гробница, равной которой не было ни у кого, вершиной за облака и рассказала тучам о смерти воробья.

Тучи, собравшись около вершины, слушали и плакали, что умер в маленьком теле великий и сильный дух...<sup>1</sup>

[Ամպը գոռում էր: Լեռները քարեր էլին նետում աջ ու ձախ, վոր մի կերպ զարկին Քուչուք-Ադամին: Կայծակներն անձրևի պես թափվում էլին, բայց Քուչուք-Ադամը պահ էր մտել Լեռինի թիկունքում և անխոցելի յեր:

Լեռինն արդեն թուլանում էր ծանր և անհավասար կովում: Նրա ճակատից քրտինքը խոշոր կաթիլներով թափվում էր ցած: Պատահաբար մի կաթիլ ընկավ Քուչուք-Ադամի ձեռքի վրա և այրեց նրա ձեռքը: Թափ տվեց ցավից Քուչուք-Ադամն իր ձեռքը և մատանին վայր ընկավ նրա ձեռքից, և նա դարձավ տեսանելի:

<sup>1</sup>Անդ, լերեն 43—45:

Լեռներն ու ամպերը թափեցին նրա վրա իրենց զայրույթը: քարահար արևն նրան, այրեցին կայծակներով, և ընկավ Քուչուք-Ադամը, և թաղվեց ժայռերի տակ:

Արձակեց Լեռնը Քուչուք-Ադամից վահլեվան Ալու գոտին, հանեց կըզըլ-տաշն ու ոկ-տաշը, և անցավ, դնաց լեռներով ազատադրելու յերկիրը:

Լեռները ստվերով պաշտպանում էլին նրան տապից: արեվը մեղմել էր իր ուժը և չէր շեկացնում քարերը, վորպեսզի չայրվեն Լեռինի վտերը:

Յերը նա ծարավ էր զգում, յերկինքն անձրև էր թափում յիրը նա քաղց էր զգում, դորշուկները կիրակուր էլին բերում և ջեյրանները կաթ էլին տալիս:

Յեվ այսպես նա դնում էր հինգ որ ու գիշեր, և կանգ առավ նա մի ձորում, վոր քնի:

Յերը նա ջուն մտավ, դարթնեց Քուչուք-Ադամն, վոր պառկած էր աովի ափին, և հավաքեց դեքերի վոճմակը, խաբեց լեռները՝ զգոնությունը և դնաց Լեռնին սպանելու:

Լեռները չնկատեցին նրան. նա թռավ, անցավ լեռներով: Յերկինքը քնած էր և չնկատեց նրան: Բայց նկատեց նրան փոքրիկ ծիաբ: Նա լարեց իր թույլ թևիկերի ամբողջ ուժը և քամուց անբախ թռավ Լեռնինի մոտ՝ նախազգուշացնելու նրան վտանգի մասին:

Ծիաբ Քուչուք-Ադամից շուտ թռավ, հասավ, նախազգուշացրեց Լեռնին և անջնչացած ընկավ:

Լեռնին արթնացրեց լեռներին, քաշեց, քսեց իր թուրը Ալու գոտուն, և թուրը դարձավ ծանր ու կրակ: Իսկ յերը նրա վրա գոտուն, և թուրը դարձավ ծանր ու կրակ: Իսկ յերը նրա վրա հարձակվեց զեվերի սե վոճմակը, ապա լեռներն իրար մտանցան և կաուր կաղմեցին: և զեվերը չկարողացան դուրս պրծնել իսկ հուք-թուրը հարվածում էր նրանց և ալրում:

Ընկան բոլոր զեվերն այս ձորում, իսկ Քուչուք-Ադամը ճիւղապարհից Լեռնին բարկու թյունից: ճու դարձավ, սողաց լեռների մեջ գոյացած ճեղքը և վախավ, ազատվեց Լեռնին բարկու թյունից:

Յերը առավտաան արևը ծագեց և վանեց լաավարը ձորում: Լեռնը զեվերի զիակներին մեջ գտավ փոքրիկ ծախ զիակը, թագեց հողի մեջ, համբուրեց զերեզմանն ու ասաց լեռներին.

— Կտուցեցե՞նք նրա մարմնի վրա մեծ և հոյակապ մի դամբարան, վորովհետև փոքր եր մարմնը նրա, բայց մեծ եր վողին և նա իր կյանքը զոհեց ընդհանուրի բախտավորութեան համար:

Մտտեցան, միացան լեռները ծախ գերեզմանի վրա, և դամբարանը, վորի նմանն ու հավասարը վոչոք չուներ, իր դադաթով ամպերից ել բարձրացավ և պատմեց ամպերին ծախ մահվան մասին: Ամպերը հալածվեցին նրա դադաթի շուրջը. նրանք լսում էին և լալիս, վոր փոքր մարմնի մեջ մեռավ մեծ ու հզոր վողին...]

Լենինն արդարադատ է, բարեսիրտ և ղթառատ նա վոչ միայն մարդկանց և ոգնում և հողում նրանց յերջանկութեան մասին, այլ խնամոտ վերաբերմունք և հանդես բերում կենդանական ամբողջ աշխարհի հանդեպ: Նրա հոգատար հայացքից չեն վրելվում անգամ ուրիշներին զարջանք պատճառող սողուններն ու զետունները: Դրանք ել իրենց հերթին զգում են, տեսնում են Լենինի ղթառատ վերաբերմունքը և ամեն կերպ աշխատում են նրան ոգնած լինել:

„Вышел из гор Ленин в стопах, и мягки были стопы под ногами его.

Ядовитые змеи, ящерицы и лягушки уползали с дороги, дабы видом своим не оскверняют глаза Ленина, а сами тайком из травы смотрели на него и плакали, что никого не оставил без ласки Ленин, кроме них.

Ленин услышал этот плач и позвал к себе змей, ящериц и лягушек и всех прочих гадов и всех обласкал он, не оставив никого незамеченным.

В счастье распозались по норам гады земли и говорили:

— Вот первый человек, который, видя нас, не хватает камень, а гладит нас и говорит нам ласковые слова“.<sup>1</sup>

[Դուրս յեկավ Լենինը լեռներից և զնաց տափաստանները, և փափուկ էլին տափաստանները նրա վոտքերի տակ:

Թռչնավոր ոճերը, մողեսներն ու գորտերը նրա ճանապարհից զուրս էլին սողում, վոր իրենց տեսնով չպղծեն Լենինի աչքերը,

<sup>1</sup> Անդ, յերես 46—47.

բայց իրենք խոտերի միջից ծածուկ նայում էյին նրան և լալիս, քանի վոր նա բացել իրենցից վոչոքել չթողեց առանց փաղաքանքի:

Լսեց Լենինն այդ լացը և կանչեց իր մոտ ոճերին, մողեսներին ու գորտերին և բոլոր մյուս սողուններին և բոլորին փաղաքչեց և վոչոքել չթողեց աննկատ:

Ուրախ ու բախտավոր սողացին բոլոր սողուններն իրենց բները: Նրանք ասում էյին.

— Ահա առջին մարդը, վորը մեզ տեսնելով իր ձեռքը չի մեկնում քարին, այլ շոյում և մեզ և ասում մեզ փաղաքչական խոսքեր]:

Ծանր եր Լենինի կռիվը ընդդեմ Քուչուք-Ադամի, վորովհետև այս վերջինը հաճախ կերպարանափոխվում եր և ամեն անգամ մի նոր կերպարանք ընդունելով՝ վերստին հարձակվում միամիտ և բացճակատ կռիվի Լենինի վրա: Վերջին անգամ այդ «զզվելի հրեշք» — Քուչուք-Ադամը կնոջ<sup>1</sup> կերպարանք ե ընդունում և վորձում ե Լենինին սպանել: Սա ազատվում ե այս վերջին վտանգից ել, սպանում ե հրեշին և ազատում մարդկութունը՝ կերտելով նրա համար նոր յերջանիկ կյանք:

„Однажды пошел Ленин к освобожденным говорить им слова правды; и когда выходил он с собрания, прямо в сердце пустил ему две стрелы, напитанные ядом, Кучук-Адам, превратившийся в женщину.

Но не умер Ленин. Приполз к нему ак-чуальчак (սպիտակ վորդը), раз в сто лет выползающий из земли, и пустил своей слюны в раны Ленина.

Ленин выздоровел, а женщину-Кучук-Адама совет освобожденных приговорил к смерти.

Но не испугался Кучук-Адам. Он знал, что ничто не может убить его, кроме яда ок-илена. И думал он: „Притворюсь я мертвым, а после незаметно убью Ленина.“

<sup>1</sup> Սոսքն, անշուշտ, ետևական հակահեղափոխության գործիք Կապլանի մասին ե:

Но приполз в совет ок-илен и своим ядом напитал стрелы. Поразили те стрелы прямо в сердце Кучук-Адама, и от его тела распространился смрадный дым.<sup>1</sup>

Լինինն ախարտում և իր մեծ գործը: Այժմ նա առանձնանում և և սկսում գրել բազմաթիվ գրքեր բոլոր ժողովուրդներին մասին: Փրում և նաև մի մեծ գիրք, վորն սկսվում և հետևյալ «վասկի խոսքերով»:

„Не жалейте жизни своей для счастья народа, как не жалел ее я!“

[Մի խնայիք ձեր կյանքը ժողովրդի բախտավորության համար, ինչպես յես չեմ խնայել այն]:

Այս վերջին պարտքն ևլ կատարելուց հետո՝ Լինինը հանդիսաբարձով մեռնում և: Նրա մահը վողբում և վոչ միայն մարդկությունը, այլև ամբողջ արևեկերը:

...И мы оплакивали его, и горы... лили слезы о нем, и вздыхало небо о нем громами.

...И плакали змеи, ящерицы и лягушки плачем великим и скорбным о человеке, который один из всех приласкал их и написал о них в своей книге:

„Не трогайте гадов земных, и они не тронут вас. И они живут и хотят счастья“.

[Յեկ մենք վողբացինք նրան, և՛ լեռներն արցունք էլին թափում, և՛ հառաչում եր յերկինքը վորտաներով:

Յեկ ոձերը, մողեսները, դորտերը մեծապես և հառաչալի վողբում էլին այն միակ մարդուն, վոր նրանց փաղաքշել և և նրանց մասին իր գրքում գրել:

Լենինի խոսքերը մեկ-մեկ անգին քար,  
Մեր թիկունքին կանգնած եր, ինչպես բարձր սար.  
Աշխարի մեջ նրան նման ել չկար.  
Շնորքով լցված էյիր, քաջ ընկեր Լենին:

Քո սեղը կանգնած է ընկեր Ըստալին,  
Ժողովուրդն է ընտրել ամենալավին.  
Այսուհետեվ ապահով է ժողովուրդը,  
Կեցցե գործ տարողդ, քաջ ընկեր Լենին:

Մի քանի բառեր ասավ Հակոբ Գեվորգյան,  
Ամբողջ ժողովուրդը թող լավ իմանան.

Լենինի պատմութիւնը յերեք չմոռանան,  
Այս է իմ կովեստս, քաջ ընկեր Լենին:

Ասել է Շիրվանջուզ (Արթիկի շրջան) գյուղացի Հակոբ Գե-  
վորգյանը, 32 տարեկան, անգրագետ կոլանտեսականը:

### Լ Ե Ն Ի Ն Ի Տ Ա Ղ Ը

Բալշեվիկի խիմնատիր, չքավորին աղատիր,  
Հաղար տարվա վերքերով մեր ցավերը փարատիր,—  
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,  
Լենին, Լենին, մեր աեր Լենին, ջան Լենին ջան:

Կուպեռնատու ու հարուստ, խաքել են ջընդո  
հաքուստ,

Ավըրում են քոնչեքը, քոս ա ընկել փաչեքը,—  
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,  
Լենին, Լենին, մեր նայր Լենին, ջան Լենին ջան:

Բատրակ, գոնա ու չորան, արիր մարտու բարեմբար,  
Զրկըվողին փրկեցիր, զրկողներին զրկեցիր,—  
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,  
Լենին, Լենին, մեր մեծ Լենին, ջան Լենին ջան:

Բանց արեւ կապեր կամար, կոլխող սերիր մե համար.  
Վով կ'աշխատի են կ'ուտի, ուրիշ ինչ ասեն՝ սուլթի,—  
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,  
Լենին, Լենին, մեր լավ Լենին, ջան Լենին ջան:

Հագարը մեկին դուռ եր, փողը ջերուամը քնն էր.  
Մըկա հարուստը շվար, հող կը տա գլխին, կու լա.—  
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,  
Լենին, Լենին, մեր լավ Լենին, ջան Լենին ջան:

Ախրատին տվիր դարվան, թող հարուստներ մխկտան,  
Բուրժուաները թող հաչեն, տաշնակները չխչխկան,—  
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,  
Լենին, Լենին, մեր լավ Լենին, ջան Լենին ջան:

Ասել և Արթիկցի 32 տարեկան անգրագետ բանվոր Բազբաս  
Անոյանը:

## Լ Ե Ն Ի Ն Ի Յ Ե Ր Գ Ը

Պավար ախշրքին մե լուս դուռ պանցիլը,  
Խեղճին, նաչարին, հոքի ջան, տեր դառցար,  
Լենին.

Չքավորներին խացի տեր շինիլը,  
Ունեւորները, հոքի ջան, փչացան, Լենին:

Ջոռբա-դուռութունը վերչացավ, գնաց,  
Ախշրքի տերը, հոքի ջան, քասիրը մնաց.

Ադա, խաղեյին, ուս ու տերտեր  
Ձնջիլը մեր յերկրեն, հոքի ջան, սիրելի Լենին:

Անըմիտ մեռնեմ, ջանտ արա բանլքի  
Ուրիշ տեղերի, հոքի ջան, նաչարն ել փրկես.  
Ումուդ կա, վոր մենք են որն ել տանանք,  
Քո խրատներով, հոքի ջան, մեր փրկիչ Լենին:

Ասել և Մահուեցի Վաղեր Ղազոյանը, 35 տարեկան անգրա-  
դետ գյուղացի. ներկայումս ապրում է Աշտարակում:

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Մեզ խեթարեց քու անըմը,  
Չքավորի պաշպան, Լենին.  
Անջախ դուսից աշկը պացինք,  
Տու խեղճի պախապան, Լենին:

Համփի ծեռից քասըբը խեղճ  
Մագար որ, արեզ ունեք հեչ,  
Քըցիր մեզի լեն որվա մեչ,  
Խեղճի պաշպան, դու ջան Լենին:

Աղալաթ ա քու ամեն դատը,  
Աշխարիս չկա քու հատը,  
Քոռանս, ով ուզի վատը,  
Նաչարի պաշպան, Լենին ջան:

Անուամբա լսել ենք վաղուց,  
Ըսպասում ենք հսոր, եքուց,  
Դորեսի խեռ մեր աշկը լուս,  
Խեղճի, նաչարի տեր, Լենին:

Չորքը ելավ Արա լեռը,  
Մեր թեվերից ինգամվ բեռը,  
Լացեց շուն տաշնակի մերը,  
Անուամիտ դուրբան, Լենին ջան:

Խարարը եկավ Ալագամի,  
Մուրադը փախավ վազը-վազ,  
Լեզուն թալեց տուս երկու գամի,  
Դուշմանըտ փախավ, ջան Լենին:

Փետրվարին ճամփեն բուք եր,  
Հեխկոմի տուն սեվ ը սուք եր,  
Խարար պերին, բալշեվիկ կու գեր,  
Ե՛լի հախտիր տու, ջան Լենին:

Մեր կործը շտկեց ապրելին,  
Խարար տարեք շուն Կապրելին,  
Սուքը պըռնեց Մուքոյի ելին,  
Չորքըտ հախտեց, մեր քաջ Լենին:

Մազլում ու խեղճ, խոսքըս արթար,  
Ափսոս չխեմ կրել-կարթալ:  
Մինչ ի մահըս, ումըր ու աջալ,  
Կովեմ քեզի, մեր մեծ Լենին:

Ասել ե Աշտարակի շրջանի անգրագետ, մոտ 60 տարեկան  
պոետուհի Գեվորգ Ավագյանը: Նա այս յերգը լսել ու սովորել ե  
Քոզղոզանցի (Լենինականի շրջան) աշուղ Բալա Գեվորգից:

Տիպ 1938 թ.  
Լրաց. 1922

Լ Ե Ն Ի Ն Ի Մ Ա Հ Ը

Խեղճ չքավորներ սեղ ը սուք արին,  
Լենինի մեռնել շատեր վոխպացին.  
Յաման, ասվազ ջան, ինչ գուրում արիր,  
Խեղճի, նաչարի սիրտը վառեցիր:

Անջախ մեր սիրտը կոչավ արեվի շողը,  
Ջաններես պոծեր եր Նիկոլի<sup>1</sup> դողը,  
Նորից գլխըններխ թափավ սեղ խողը,  
Լենինը մեռավ, մեր տերը հիվ ա:

Ունեվոր, հակա, սաղ ուրախացան,  
Գինան հենց ետ ա, ազատվան, պըրծան.  
Աղքատների սիրտը արունով լցվավ,  
Ես դարա-խաբարը յեփ վոր լեցին:

Բո հիշատակը անթառամ ըլնի,  
Խեղճի, նաչարի դու պաշպան, Լենին.  
Առանց քեզ ի՞նչ կ'ըլնի խեղճերի հալը,  
Քսսսիր-քսսսուրի դու խամխար, Լենին:

Ասել և Առերմալուեցի 60 տարեկան, անգրագետ պառակ  
Ղուճրի Սիմոնյանը

1 Նիկոլայ 11 ցարը:

Յ Ե Ն Գ Ի Ջ Ա Մ Ա Ն

Ջաման եր են դամանը,  
Ընցած քսննա դամանը,  
Յհւր եր դարա-դիվանը,  
Չոռն ինան վոսկին եր պանը,  
Ալչու եր վարի ճանը,  
Թո տոսս կսր խեխճի ջանը:

Ջաման եր են դամանը,  
Ընցած քսննա դամանը,  
Կար մե կնդան թաքավոր,  
Երուն խմող ըմմըն որ,  
Ե'լ յերանալ, նաչառլիկ,  
Սաղ շուն ը կել ախշարք լինք.  
Ե'լ գըլավա, պըրստավ,  
Կլխըններխ դառդ ը ցավ.  
Քսսխա, գզիր, ըսպոռչի,  
Լեսնիկ, ազենտ, քսմաղչի,  
Ե'լ իրխափոխ, ել ժամխեր,  
Ե'լ քանդխուղա, ել տերտեր,

Ֆալշի, դառվուշ, դուքանչի,  
Ե՛լ թիզ պացող, ել չառչի,  
Ե՛տ ժամ, ետ վանք, վարթըպետ,  
Սաղ թալանչի, ծեթ ք պետ:

Բըշեր-ցերեկ տու, հն տու,  
Տղատ ծնավ—տու, հն տու,  
Կնունք արիւր—տու, հն տու,  
Լաճ փսակիր—տու, հն տու,  
Ախչիկ ճամխիր—տու, հն տու,  
Մեռել մեռավ—տու, հն տու...  
Սըլուզի պես երընխում,  
Աշկ են տնգե չոռս յանեն,  
Վավեյլայի վոր տանան,  
Մե տեղ մե քիչ շիրա կա՝  
Կալք ծեծիր, բը մեզի,  
Բաղը քաղիր, բը մեզի,  
Կինի քցիր, բը մեզի,  
Արաղ քնշեր, բը մեզի,  
Կովը կթիր, բը մեզի,  
Ցան ք փթիր, բը մեզի...

Ա՛խ-վա՛յ աման, աման եր.  
Ետ ինչ ջուռա դաման եր.

Բաշքըշան եր չոռս յանեն,  
Մարթ բեզար եր ուր ջանեն:

Ասել և Իգդիրցի Պետրոս Վարդանյանը, 32 տարեկան, գրա-  
ճանաչ, չքավոր դյուղացի, ներկայումս ապրում և Եջմիածնի  
շրջանում:

**ԼՍՆԻՆ ՓԱՇԱ**

Ն Ա Ղ Ը Լ

Ա ս ա ց՝

**ԴԱՐՈՒ ԱՍԲՅՈՒՄՅԱՆ**

Գրի տառով 1934 թվին

**ԳԵՂԱՄ ԹԱԳԵՐԳՅԱՆ**

«Լանու նաղը»-ն առաջին անգամ (18 ոգոստոս 34 թ.) զբնա առա Աղբաբայի յայլաներում, զգրար Գաբոյից:

Գաբո Բարցումյանը մոտ 65 տարեկան, անգրագիտ, վատառողջ մի մարդ է, Տաճկաստանի Խիզանի շրջանի Խակեվ գյուղացի: Գիտե բազմաթիվ «խեթնիքներ», «խաղեր», «մասնիներ» և այլն:

Գաբոն ջանել ժամանակ հովիվ է յեղել, այնուհետև յերկար ժամանակ «խղմնթքն» դանադան շաղիքանց» մոտ Վերջը, «անկախություն» ձեռք բերելու համար, զգրար և դարձել: Այժմ նա դոճ է յուր «փեշակ»-ից: «Մկա, չխո սաննաթքնը եմ, զիմ ողլուշաղ կը պախիմ»,—ասում է նա դոճուհակությամբ: Տղա, աղջ «բուլ-բուլ» ունեցել է, բայց «թնամրգ» էլ մեռել են, ու աղջիկ «մի մացեր է», վորն ամուսնացել է և ամուսնու հետ ապրում է Գյանջայի Շամխուր ավանում: «Վըր հնչիլըն մըկա պառավ մի ունեմ»,—ասում է նա:

Գաբո բիձան ապրում է Լենինականում: Նա հաստ, կարճահասակ, դեղնավուն, հիվանդոտ, մինչև հոնքերն սպիտակած մարդ է: Բնավորությամբ կենսուբախ և շատախոս. միաժամանակ չափազանց ծածկամիտ է, մի քիչ էլ պարծենկոտ, բայց և շատ սրամիտ, լսելու-սովորելու ձգտում ունեցող:

Գաբոն «Լանու նաղը»-ը սովորել է զգրար Ուստա Սեփոյից, յերբ վերջինիս հետ 1922—24 թ. թ. «Գոստոս» յե յեղել, ու միասին շրջել, զգրարություն են արել: Գաբոյի ասելով՝ նաղը Սեփոն ինքն է հորինել:

Ուստա Սեփո կամ Ծաղկի Սեփո, կամ Շայիր Սեփո, (ըստ  
վճռանց ել՝ Ծուռ Սեփո, Պիլան Սեփո, Վըրըշիկ Սեփո և այլն)  
յեղել է Տաճկաստանի Խիզանի շրջանից, Նա հայրենիքից իմպե-  
րիալիստական պատերազմի ժամանակ դադարել է Սյուրկովկաս, մի  
առ ժամանակ ապրել է Սուրբավուրյի շրջանում (Պալֆալու դյուդ),  
հետո յեկել է Վաղարշապատ։ Նա այստեղ ել պարապել է  
դրարուլթյամբ։ Սեփոն մեռել է Վաղարշապատում 1926 թվին,  
մոտ 50—55 տարեկան հասակում։ Նրա հայրենակիցներին  
և «Թայդաշները» ասելով՝ Սեփոն յեղել է միջահասակ, առողջ,  
«կարմիր լալա», շեկ մազերով ու կապույտ աչքերով մի մարդ։  
Շատ կը խմեր անու անիւր ետ երբ։ Պատմում են՝ չխմած  
ժամանակ զգենու կլոխ բամբիւր, ծեն չեր խանի, ամմա վորը ըշկի  
կպներ անու պերան, ել թո՞ղ... անլան-կաֆլան կը տաններ»... Ու-  
րեմն լուրջ ժամանակ նա յեղել է խեղճ, մեղմ ու լուռ մի մարդ,  
իսկ խմելու—ընդհակառակը, նա սկսել է յերգել, կանչել ու փո-  
ղոցները շրջել... «Մեկ պա՛ մ՛ պատահեր, անլիսի Սեփոն խաղ կը  
կապեր. ամմա չուրի սանլուշ յեղեր, վոնչ կարար խաղ կապել,  
վոնչ ել կանչել... Շատ շնորհալի, սրամիտ մարդ է յեղած։ Իմա-  
ցել է բաղմամբիւլ «խեքածներ», «տաղեր», «խաղեր», «մանիւններ»,  
«մասններ» և այլն։ Մեկի դեմ վոխ ունենալիս, խմելու ժամա-  
նակ նրա հասցելին ուղղել է վոտանավոր-հայհոյանքներ ու  
բարձրաձայն յերգել փողոցներում... Վորեկ դեպք պատահելիս՝ նա  
անմիջապես խաղ է կապել» ու ասել։

Մեկը գողանում է Սեփոյի մի քանի խորճ խոտը։ Նա խաղ  
է կապում («հիշում են մի «բանդը»), այն է.

...«Որտ եծերաց մեկ տեղ կեր խոտը,  
եծերտ ի ուտեն քո՞ կոտը,  
Հանրից կարվի քո՞ խոտը,  
կոտը հավազակ, խարամ Դարմոն»։

Մեկը դրան փող է պարտ լինում, բայց չի տալիս, ու Սե-  
փոն «կապում» է այս խաղը.

...«Անվազ կարա քո՞ աղիզ կյանք,  
Ձիմ փորեն տան, առնեն պատանք.  
Քե արժան չի վոր տնեն վանք,  
Լանըդ շներաց փայ եղի»։

Մեկն իր աղջիկը չի տալիս սրա ուղած աղային, աղջիկը  
փախչում է աղայի հետ... Սեփոյի խաղը պատրաստ է.

...«Վճիլ ի տեսի՛ անչիլ տղին փախցընի,  
Տանի, ուրանց տեղի մեկը թնքցընի.  
Յեփի վոր քեֆը ուղի՛ խանի, խաղցընի,  
Հանքերդ ի քոսանա, եյ Նարդիդ անչիլի»։

Մեկը դողանում է Սեփոյի աքլորը. նա ասում է.

...«Մանմա խմիթուն, դրսեն խմիթուն,  
Աքլոր բունիւր, կերար թնքուն»...

Մեկ անդամ, միս առնելու ժամանակ մի վարդապետ վիրա-  
վորում է Սեփոյին։ «Շախի» յերգը պատրաստ է.

...«Պոպլոդդ ի նման սատանի պոդ,  
Չաղացեր իս քանց շամբու խոդ»...

Գոշնակցական «սկիտիվները» մի անդամ Սեփոյին սատափելի  
ծեծում են, կասկածելով նրան ինչ վոր բանի համար... Ու նա վոխ  
է պահում դրանց դեմ և խմելիս ամեն մեկին յերգով դաղում...  
Որհրդայնացման ժամանակ, պատմում են, Սեփոյի «քեֆին քեֆ»  
չեր խանի, «ուրախութենից ծուր եր»... Ումիլ, ընկել եր փողոց-  
ներն ու «մայրու-իկնեռուն» գովելով՝ ման եր գալիս... Ճեմարանի  
բակում, կոմունարների թաղման ժամանակ, պատմում են, վոր  
խմած, աղեղն ու չաքը առած, վորպես սադ, «կը չալեր» ու  
«Լանու դաստան», «մեկ լի պարտիզաններու (պարտիզան) խաղ  
կը կանչեր»...

Ն ա յերկրացիները, իսկույն հիշեցին «Լանու նանդը»-ը, յերբ  
կարդացիւ—

Վայ, ետա նանդը (մի յերկուսը—դաստան) մի՛նք քանի-

քանի անգամ լսեր ինք Սեփոյլից», — ասում էյին նրանք: «Ես ան  
նազ զի զինք ի ասե. ջանքմ, ենու պան ասել չեղի, ենու շնուքք  
բանայ ի»... «Տանակներաց ջգրու խամար (անու ափիցին անր)  
ենիլ բանուրիներուն շնա կը սիրեր»... «Ջլանին կը պաշտեր  
անի»... «Բանի մ'—քանի մ' խողեր եր խանե Լանու խամար»...

Գ. ԹԱՐՎԵՐԴԱՆ

1

Են վնվ ի, վուր ժողովուրթին կը պախի.  
Են վնվ ի, վուր ըռըպանաց քսմնդ ի.  
Են վնվ ի, վուր Ֆանլաքտերաց խամխար ի.—  
Ենիկ մեկ փաշե մ' ի, անուն ուր Լանին:

2

Մասսար ըմ կեր, անուն ուր մանուրիկ.  
Լանին անունց դինբաշին ի:  
Վուլ անունց խեա ի, դուր մալ կես կ'ենի խըա  
ուրիշաց:  
Մանուրիկ, գնվա՛ ըզմա Լ ենն խըա ուրիշաց շերիգ:

3

Հսխըրի մալ, գովանթ, գն զըմմեն մոտ զանգինաց.  
Կնյք, զըկարողութեն, գն զըմմեն մոտ զանգինաց.  
Վուսկի, զըմուլք, գն զըմմեն մոտ զանգինաց.  
Յանգիրն ի, ըզուր երկու տարանկ ծեռնիր...

Ձանգին կ'ուտի յեղ ը մեղը, նստի ըզուր ողեն.  
Հանխատ չունի ուրան զըգարեխաց, չոթան.  
Ձանգին տըփի նոքրու կլխուն, անել տա ըզուր պան,  
Հանխատ չարչրվի, չարըլի, չոթ տուն կան ուր ջան:

Ձանգինաց ը սուլթանաց խոսկ մեկ ի.  
Ամա գ'արի վուր, անունք քիչ ին, հանխատ շատ ի.  
Գիչ զըշատ կը տանջա, զանու նաֆ կ'ուտի.  
Սիլահ ը կուլաթ անու ծեռին ի:

4

Տանակ վոսկոռաց խասեր ի չխո...  
Լանին փաշեն հանխատի մ' աղե մ' եր.  
Ենիկ թուվ ըզուր սուլթան ը հոթմաթի հիրես.  
— Յես տը կուլիմ, ասից, տ'աղատիմ զհանխատ...

5

Հուքմաթ եր, քնչից ուր զուրք ը զուրմալիտ.  
Ձանգիքտիր տրին ուրանց խոթ ը խանգեն.  
Բանգեր, անգանիր չխո խասին քոմագ:  
Ատունք ամեն քշին, յերիչ երին գըլս Լանին փաշեն:

6

Լանին փաշեն եր, կանչից ըզուր հանխատ-  
Փուզմուրաքտիր.  
Կանչից քոսըր, պանվուր, խեխն խզմոթ քոթիր.  
Հինչքան կին անպիտին, թափին Լանին փաշին  
քոմագ,  
Փատ ը փատատ, չոթ ը գանգանգ առած զոմբանց  
սիրահ:

7

Ղսխտին Լանին փաշեն խեծավ ուր ձին, քըշից.  
Մյոսլիկ<sup>1</sup> փաշեն խեծավ ուր ձին, քըշից.  
Աթարբեկ<sup>2</sup> փաշեն խեծավ ուր ձին, քըշից.  
Կալին<sup>3</sup> փաշեն խեծավ ուր ձին, քըշից.  
Ղուկասըվ<sup>4</sup> փաշեն խեծավ ուր ձին, քըշից,  
Քամկից լե գոհ երին ֆաղիբաց որդուն:

8

Հոթմաթ եր, խըտ զանգինաց առան, եկան ուրանց  
զուրք.  
Նամխարքիր առան, եկան անբանց զուրք.  
Չխո Ինգլիկ առավ, եկավ ուրան զուրք.  
Ֆոանգսըզ առավ, եկավ ուրան զուրք.  
Ամբքյան առավ, եկավ ուրան զուրք.  
Ճայփուն առավ, եկավ ուրան զուրք.  
Չին-Մանչին առավ, եկավ ուրան զուրք.  
Մսըր-Հիսար առան, եկան ուրանց զուրք.  
Ոսման-Տանիկ առավ, եկավ ուրան զուրք.  
Աջամ-Պարսիկ առավ, եկավ ուրան զուրք.  
Հոթմոջ-Ալման առան, եկան ուրանց զուրք.  
Ատունք զըմեն տը ծեծկվին խըտ Լանին փաշին:

1 Ա. Մյոսլիկյան:  
2 Գ. Աթարբեկյան:  
3 Մ. Ի. Կալինին:  
4 Ղուկաս Ղուկասյան:

Զանգինաց զուրքի մե զըսմ եր՝ փարով վանքկան.  
 Զանգինաց զուրքի մե զըսմ եր՝ շուխ պնխաված.  
 Զանգինաց զուրքի մե զըսմ եր՝ վնխկուտ-Չանպախ-  
 Մե զըսմ լե ուտար, անծանութ մարթեր:

Են վուր փարով եր եկի, ըզուր կլնիս կը պնխեր.  
 Են վուր շուխ պախաված եր, ըզուր կլնիս կը ծանծկեր.  
 Են վուր վնխկուտ-Չանպախ եր, կը վախեր, կը  
 փախեր,

Մացեր ին ուտար մարթեր, վուր ուրանց վեջ չեր:

Են վուր Լանին փաշի մարթեր ին, մեկ սիրտ, մեկ  
 խնքի-  
 Զըմմեն ել զրկված պանվորքտեր ին հնխկատ.  
 Զըմմեն ել զրկված ըռչպնքեր ին հնխկատ.  
 Զըմմեն ել զրկված անկուռծ, խխն, հնխկատ,  
 Հախըբի զուրկ, սիրտը վնոված մարթեր...

Զուրքը ը ըռհատ զանրկին-զանրկվան խըտ իրար.  
 Ծեծին-ծեծկվան խըտ իրար.

— Ե՛յ, վրեժի կնիս ի, կանչից Լանին փաշեն.

Զանրկեք, ծե զուշման փուշ երեք.

Կուլեք, ծե ազատութեն ծեռք պերեք...

— Ե՛յ, կանչից թաքնվուր-սուլթան ուր գորաց-  
 Զանրկեք, ետա չփլախ-չփլուխ նախիրաց.

Վոն շատ կոտորի, անու կը տամ զըխաչ ը մինդալ.  
 Քնոցածնիբաց ետա խանժան կ'ուզա խլիլ՝  
 Զիմ թուրը ը թնջ, զիմ թնքնվորութեն...

Զանրկին, ծեծկվան լուսուռն չուր ի եվար.  
 Զորաց մեջ ինչքան կին ըռչպնքեր,  
 Զորաց մեջ ինչքան կին պանվուրքեր,  
 Ասին.— Մենք վրեժ գանինք մեր Ֆնդիը անպարտանց.  
 Պուլուր փնխին, անցին զըխ Լանին փաշեն:

Զանրկին, ծեծկվան լուսուռն չուր ի եվար.  
 Զանուռնք ունին զըթոփ ը գնմընրա,  
 Ատուռնք՝ քանի մ՝ փշտով ը գնրաբինա.  
 Զանուռնք ունին մոսին, մանաին հրացան,  
 Ատուռնք՝ պնխ ը յեզան, գնգանագ.  
 Զանուռնք՝ զըպուլըմիտ, չնրիս ի Ֆնլնք,  
 Ատուռնք՝ վնրուց, չնքըջ, փոցիս ը կերանթի...

Ե՛յ,— կանչից Լանին փաշեն,  
 Խեծավ ուր ձին, քըջից հանեչ.  
 Մինչեվ յեփ, անսով, ըզմե անուռն ծըծիք.  
 Մինչեվ յեփ, անսով, ետա հնխշար գավթիք.  
 Մինչեվ յեփ, անսով, մե իրանվուռնք խլիք,  
 Մինչեվ յեփ, անսով, հնխշար տիրապետիք...

Ասով, քըջից հանեչ՝ ըզուր կնրմիը բնյրազ պոռած.  
 Անուռ ետվեն պանվուր կննց խնգանր-խնգանր.  
 Անուռ ետվեն ոըչպնք կննց խնգանր-խնգանր.

Անուռ հատվեն սանխյաթփքնը կննց խննդնր-խննդնր-  
Անուռ հատվեն անտուռն, քննդցած խննդնր-խննդնր-  
Անուռ հատվեն անկուռն, յետիւր խննդնր-խննդնր-  
Անուռ հատվեն անխուղ-անճուր խննդնր-խննդնր...

Պռնին զնշխար, զըսար, զըքնը զըմմեն դեխեն.  
Պռնին ծնրիւր, քննը, զըկնպան զըմմեն դեխեն.  
Պռնին դետիւր, մերի, չընդըլ զըմմեն դեխեն.  
Պռնին տնշտիւր զնոռ ը պնխիդ զըմմեն դեխեն.  
Պռնին անուռ, չնյիւր-չիման զըմմեն դեխեն.  
Պռնին զըծուլ, հնխարուր, որման զըմմեն դեխեն...

Չարկին, զարկվան, դոման ելավ, հնխար պունից.  
Չարկին, զարկվան, լեշը փոխավ տնպակ-տնպակ-  
Ըսպանվողաց անուռն ելավ, կայից զըգետ,  
Ես անպագետ քննը կլտորեր զըմանաքննը...  
Չարկին, զարկվան՝ մե կոզմ հնքմթ, մե կոզմ

ըռյնթ.

Չանուռնք ունին զըթոփ ը գնլլա, զըգոմմրմն.  
Ատուռնք՝ քանի մ՝ փշտով թվննք, զնրնբինն.  
Չանուռնք ունին մոսին, մանտին, խըշտ-հըացան,  
Ատուռնք՝ պնխ ը, փոցխ ը յեղան, շիշ, կերանթի.  
Չանուռնք ունին զըսուլըմիտ, չնրխ ի ֆնլլք,  
Ատուռնք՝ ճպուռ, քննը ը կուիթ, կային, ուրաք...

Չարկին, զարկվան չուրի կետոր, արեմ թեքվից,  
Են հնքմթի զորաց մեչեն հինչքան կին,  
Են վուր փնրով եր եկի, ըզուր կլն կը պախեր.  
Են վուր շուխ պնխված եր, ըզուր կլն կը ծածկեր-

Են վուր վնխուռ-Չանպախ եր, վախեր, կը փախեր.  
Մացեր ին ոտար մարթեր, վուր ուրանց վեջ չեր:

Կետոր թեքվից, Լանին փաշի զուրքը նեղվից...  
Ի՞նչ տը աներ փետ զըփնտատ զըթոփու տեմ.  
Ի՞նչ տը աներ կացին, մանգաղ, թվանքի տեմ...  
Լանին փաշեն խննր երեց քնմազ ուղեց.  
Լանին փաշեն հնվար եցկից, խննխնր ուղեց.  
Խննխնր, քնմազ թնփան, եկան չորս դեխերաց.  
Եկան, խննտան սեմ պննվորքիւր խննդնր-խննդնր-  
Անուռնց հատվեն ըըշտարքիւր խննդնր-խննդնր-  
Անուռնց հատվեն սանխյաթփքնր խննդնր-խննդնր-  
Անուռնց հատվեն լութ-քննդցածնիւր խննդնր-խննդնր-  
Անուռնց հատվեն անխուղ-անճուր խննդնր-խննդնր...

Քնմազ եկավ, Լանին փաշի կուզմ զորացավ.  
Հնքմթաց կուզմ թուլցավ, խոքնավ...

Չարկին, զարկվան դոման ելավ հնխար պունից.  
Չարկին, զարկվան լեշը փոխավ տնպակ-տնպակ-  
Ըսպանվողաց արուռն ելավ, կայեց զըգետ,  
Ես անպագետ քննը կլտորեր զըմանաքննը...

Չարկին, զարկվան, Լանին փաշի զուրքը զորաց.  
Չար քննիցին, աչքը խփուկ հանեջ վնդին.  
Ել չերիշկին թոփ ը թվանք զըսուլըմիտ.

*Աղբուրդ*

Դողով պանցին ուրանց ճամփան մըչ են զորաց.  
Վուտքի տակ լնչ տանակ-տանակ կոխին, անցան.  
Յոթ խատ դարնվեր, ընդներ, մեկը անցներ հանուչ.  
Զամգանք թնփեր քանց փնջիդու խոխվ-խնդով...

Լանին փաշեն կ'երթեր հանուչ՝ պոնած բայրադ.  
— Հան-հան, տղաք, հանուչ անցեք, որը մերն է...  
Հանուչ անցավ քնդցածնիրաց ուղուն մեկեն.  
Հոքմաթաց զուրք խնովավ հիրուր, փախավ ցրվով...  
Լանին փաշի զուրքը թափավ քանց զըմուրիխ.  
Քանց բհարու սել ը սելավ գետ վնրնրած.  
Քանց գոլանի վնրնր կարկուտ... զլնչ պնտուխաս.  
Քանց զըծովու ֆոթուսի պես անդ ը անման,  
Քանց սամ յելի... երկինք, կետինք իրուր խնուվան...

Մեկ ղիյնմաթ փոթավ զնխշար դպավ իրուր.  
Լանին փաշեն յերիշ երաց, առավ զըմմեն.  
Առավ անուենց թոփ ը թվանք, շնբախանեն.  
Առավ անուենց մոսին-մնուտին զըղումբարեն.  
Առավ անուենց զըպուլըմիտ, չարիս ի ֆնլնք.  
Տվից, ցրվից, քանդից, փոփց մեկ հնխշըրքով...

Հոքմաթաց զուրք վուր մեկն ընգավ, վուր մեկ  
փնխավ.  
Մըչ հնխշըրին կորան, կնցին, թողեր կտրավ:  
Հոքմաթբաշի, ենա ըուսնց ճոչ սուլթանին,  
Զըու դանդանլոչ ը պնց պերան ենա ծնրին,  
Սադ-սալամաթ պոնին քնչին մոտ Լանինուեն:

Լանին ասավ.— Պիյան-սնբադ, ետ ինչ երիբ.  
Քն ինչ պնն ի կառավարել մըչ հնխշըրին:  
Ենա ծնր, թե.— Յես քն վոտաց մեռնիմ, Լանին.  
Մի սպանիր, հեյրան իմ քե, ձի խնայիր.  
Կտոր ըմ խող տու ցանիմ դավուեն, ընեմ ըոստանչի,  
Քն սնդաղին, խեա իմ խիզնանց, ապրինք մինչի...  
— Յես չըմ խախվի, ետա շողամ խոսքերտ իթնրգ.  
Ասեց Լանին, քաշեց զըսուր կլնխն իզնրկ...  
Կլոխն իզնրկ, շնմգնք թալից ենա քնխան.  
Փողանիրաց շներն եկան ինչդանդար կին,  
Քնչին, ենու լնշը երին ծվին-ծվեն...  
Ենու կլնխ զնրկին երկեն մեկ ըոտիմ ծեր,  
Առան ուրանց ծեո, քանց բնջրադ պարզիցին վեր,  
Հնխշար-նլնմ պարտցուցին, չոբի նեխավ,  
Ետեվ քցին մըչ քնլուգին...

Ստակավ զըմշել, վուր նստեր եր հնխշըրի վզին.  
Քննի-քննի անուենքտեր եր երի ենի,  
Քննի-քննի ոջախներ եր մարե ենի,  
Քննի-քննի ճոուկներ եր թողե խեխճ-վուրփ,  
Քննի-քննի մերեր-քնրեր սելիբ խնքած,  
Քննի շնհել-ջիվան կնքտիր վորփեվմրի,  
Քննի-քննի կը մխկուտին մըչ զնդանաց,  
Քննի կոխվ զըշնմաթա սարքեց ենի,  
Կ'ուղեր զախշար-նլնմ զնվթի, իրմով ենի...

11

Լանին փաշեն մանուկիկի արից զանուհն.

Երկրի կարք վերուց, երից կլոխն ի վեր:

Են անանչվա զանգիններաց երից կատու,

Խլից ամեն ինչ ծեռներաց, թողից անտուն:

Են անանչվա քանալներաց երից փաշա.—

Չըմմեն մեկ-մեկ ամսամուր ին մըչ դիվանին:—

Են անանչվա բեգիւր, անգեք, շինից յեսիր.

Չըմմեն պունից, կոռծից, եսկից, քշից ներսիր:

Են անանչվա նոքար, չորան, զբխումս թքար,

Չըմմեն տարավ, ավից հուսըմ, արից սնրքար:

Երկիր զըմմեն կլոխ ետու պանսուրքերաց.

Երկիր զըմմեն կլոխ ետու ընըշպարաց,

Երկիր զըմմեն կլոխ ետու խեխճ նոքարաց:

Ով վուր խեխճ եր, նանչար, քանդցած, տարավ հանուհ,

Ով զանգին եր, անգա ու բնգ, ամից կլոխն,

Քշեց, կնաց մամու խոլթուխ, անտանց մտավ,

Յան թե քանդցած, ծարավ, զվուց, վեռը խնտավ:

Երկիր հիտակեց Լանին փաշեն,

Թողից զըմմեն ուրան մարթեր.

Հանխատավուր առից ուր թեվի տակ...

Տեր, պարերար վողորմած.

Տու քամնգ ըլնես Լանին փաշին

Ը ուր զուրք ը զուրապիտաց:

Ամեն:

Կնա 1937 թ.  
Հրատարակ

## Լ Ե Ն Ո Ւ Խ Ա Ք Ա Ս Թ

Ա. ս. ս. ց'

ՍՍ.ՀՍ.Կ Ա.ՊՐՈՅԱՆ

Գրի առավ 1935 թվին

ԳԵՂԱՄ ԹԱՐԱԵՐՉՅԱՆ

Առել և Մշու շրջանի նամ դյուղացի Սահակ Ապրոյանք 55  
տարեկան, անդրազետ Հայրենիքում նա հովիվ է յեղել: Պատերազմի  
ժամանակ դաղթել և Այսրկովկաս, ապրել և Լենինականի Գուգ-  
բյանդ դյուղում, Գիլիջանում, Ախտայում, ապա փոխադրվել և  
Բասար-Գեչար. իսկ ներկայումս ընտանիքով հաստատվել և  
Ն. Բայազետ: Ինքը Ղաերի մաղխտորալի 5-րդ դիստանցիայում  
աշխատում է, վորպես բանվոր: Իր ասելով՝ «Լենու խաքնի»-ը  
լնքն և հորինել:

Գ. ԹԱՐՎԵՐԳՅԱՆ

Ուռուսի թաքավոր յեփ Լենու խորն ու ախպորը՝  
 դարադաչ երեց, են ժուկ Լենի հալա ճժուկ մ' եր:  
 Յեփ Լենին գանջըցավ ուրան ճանչցավ, բաշլայեց  
 ուռուսի թաքավորի տեմ թալաք զարկել, վարսալամ,  
 աշխատիլ, վոր ենիկ կլխի վրա կն, վոր ուրան խոր  
 ու ախպոր հարիֆ խանա:

Լենին եր, են:կանդար զարլա-պուճախներաց զար-  
 կեց, զարկվավ, տեսավ զԵ, պան տնն չի կն: Ըսխը-  
 տին ուրան կերպ ը լիւսսա <sup>պայլ</sup> փոխեց, տարցավ խուս,  
 առավ ուրան ուրաք, սղոց ու ըմմեն շուռա հաջաթ-  
 քիլ, հաշխատեց, կերպ երեց, մտավ թաքավորի պա-  
 լատ, բաշլայեց խուսուլթեն անիլ:

Լենին դաստի ենքան հավատար ցուց կու տեր  
 իրան, վոր տառցեր եր տան տղա: Ես Փանդ ը Ֆելով

*Կարգով*

1 Իլլա Ուլլանով (հայր) և Ալեքսանդր Ուլլանով (սեղրայր):  
 Առաջովը շփոթել և պատմական իրողութունը՝ կարծելով, վոր  
 հայրն ել և կախաղան բարձրացվել: Վրպական չափադանցութուն  
 և վրեժի զգացմունքն ուժեղացնելու համար:

վերջ ենիկ իրեն առավ, ուրան խամար մուկնաթ երեց, վոր տուն ըմ տան, սթար եղի մըչ պալատին:

Պալատի տակի պատվալքերաց մեկը տվին ենու, վոր քըշերներ սթար եղի:

Լենու միտք են եր, վոր ուռուսի խոփած, քաֆթառ թաքվորին մեկ ծեփով մ' ըսպանի, ուրան խոր ու ախար հարիֆ խանի:

Ըսխտին վոր Լենի պատվալի մեչ տեղ քթավ ուրան, քըշերներ բաշլայեց պալատի տակ ծակել, բողբմ տար:

Մե ժուկ մ' ընցավ, Լենի սաղ պալատի տակ լաղմեց, քանքան ետու, սորա բաշլայեց տրսեն, ուրան ընկերներաց մոտեն բոմբ ը դինամիտ պերեկ, լցնել լղամների մեչ:

Յեփ լղամներ լիփը-լիք բոմբ, դինամիտ, բարութ, գուլլա ելից, մեկ քըշեր մ', — հսն բաբամ, վոր տուկաս, — մեկ երկեն մ' ֆիթիլ-տրեց բոմբերաց մեչ, տուս եկավ, կրակ ետու, փախավ... Բոմբեր պացվան, հսն քի պալատ, պալատի խեռ սաղ մեկ թաղ մ' ել դար ը դարար ելավ, կոծանվավ: Թաքվոր ուրան քուլ ը քուլֆաթով, ուր պալատականներով մեկտեղ, առթվան, ջանները ջաննամի վասըլ ելավ, դնաց<sup>1</sup>...

Գարի տես, որ թաքվորի ճոչ տղեն ետա քըշեր, ուրան քեռու մոտ խուր եր եղի, ենիկ պոծեր եր:

Մեկել որ յեփ հիմցան ետա սիթամ պան երոյ ձևենի յա, սաղ ջամդար, պոքստով, գարադավո, նա-

<sup>1</sup> Վրպական արձագանք Ստեփան Խալտուրլինի տետրիստական ակտի:

չաչնիկ, սաղնիկ, յեսավուլ, հինչքան կին, թափան, բաշլայեցին. ժուս գալ, վոր ծեռ եցկին զԼենի:

Ամա, ինչ Լենի յեր, ուրան հարիֆ խանեկեն սորա, ետտեղաց փախավ, մերաշ ընցավ Զին-Մաչինու թաքվորի խող:

Իաջ, շնորքով, զոչազ մարթ եր, կնաց Զին-Մաչին թաքվորի պալատ, ուրան զուլուլ մ' քնթավ, մտավ խղամթքոր:

Մե ժուկ ը ժամանակ մ' ընցավ. որերեն մեկ որ Զին-Մաչին թաքվորի հախչիկ սեյր երթըլու վախտ, ուրան աշկառավ Լենուն: Կայնավ, վարավուրդ երեց, հախչիկ խավանեց զԼենի, ուրան սիրտ կպավ ենու: Ամա դ'արի տես, որ Լենի ել ենու սիրեց. երկու ջահեղներաց սիրտ կպավ հիրուր: Թաքվորի հախչիկն եր, գարնվածի պես յեռ եկավ ուր տեղ, վերուց դիվիթղալամ, մեկ նամակ ըմ կրեց Լենուն, թե.

«Լենի, բն չասես. իմալ մեկ կը փաթթի ուռի ծառուն, իմալ պաղրեխ կը փաթթի զվարթի քուլուն, իմալ ոց կը փաթթի լաղլազու վիզ, եմալ ել իմ սիրտ փաթթվեր ի քո սրտին. իմս կաս, տու յես, չկաս՝ տու յես: Ագսնր իմ խեր խաղառ ընգնի, մը վախիր, իմ ջան քե հեյրան ի. են վախտ կ'առնենք հիրուր, կը փախինք ողզս թաքվորի խող, ուրիշ մամլաքսթ. ենտեղ կ'ապրենք խրտ հիրուր»:

Լենի եր, նամակ առնելու պես՝ կարթաց, ամեն ինչ հիմցավ, սորա բաշլայեց ջըվաբ կրեկ հախչիկան, թե.

Ահա  
Թաքվորի  
Ինչպե՞ս է

«Զին-Մաշինու թաքվորի հախչիկ, ագանք քո սիրտ մեկ դանդի դադար է ձի կպե, իմ սիրտ մեկ սարի դադար է կպե քեզի: Ամմա պայց մեկ վախտ ը մադաթ սարը ենենք, տսնենք՝ գանջաղ մեզի ի՞նչ կեզի: Չունքի քո թաքավոր խեր ձի պես քանքը քոթիբի մ' հախչիկ չի տար»:

Հախչիկ կ'առնի կիր, կ'ասա.

—Աղեկ, թո եզի...

2

Թող ետոնք ուրանց սեր եսպես կադանի վելեն, մենք խաբար իտանք Ուուուսի ըսպանված թաքվորի տղի մոտեն:

Թաքվորաց մոտ դայտա-կանուն կա, վոր թաքվորի տղեն չուրի չփսակվի, իրավունք չունի ուրան խոր թախարը նստի: Ըսպանված թաքվորի տղին խամար վաքիլ-ապեկոն ըմ տրին, չուրի ենիկ փսակվի: Կանուն ել կա, վոր թաքվորի տղան պեսք ա անպատճառ թաքվորի հախչիկ առնի ուրան թաքունի:

Ենիկ ել խաբար, իրավունքներ խրկեց հաշխրի չորս պուրը, վոր ուրան խամար մեկ արժանավոր հախչիկ ըմ քթնին:

Ժուկ ը մուդաթ ընցավ, թաքվորի տղուն ջըվար եկավ, քի.—Բն, չասես՝ Չին-Մաշինի թաքվոր մեկ հախչիկ մ' ունի, վոր չուտես, չխմես, ուրան խաղ ը խալին, գոյլ-ջամալին թամաշա ենես:

Ուուուսի թաքվորի տղեն ետա սալըղ առնելու պես, կ'առնի ուրան պատվելի մարթեր, իրան կը քըցա Չին-Մաշինու թաքվորի խող:

Չին-Մաշինու թաքվորն է, կ'ուրխընա, առք-փառք կ'ընդունա, կը պատվա, կը հարկա: Յեփ Ուուուսի թաքվորի տղան ուրան կալու պաճառ մանչուր կ'ենա, Չին-Մաշինու թաքվոր մեկ հաշխրքով ուրախ կ'եզի, կը խընդա.

Թե.—Մեկ հախչիկ է, քեզի զուրբան:

Կողորդա, հախչիկ կը կանչին:

Յեփ հախչիկ կը կանչին, թաքվորի տղեն մաթ ը մալիլ կը մնա, կ'ասա.

—Իմս կա, ետ է. չկա՝ ետ է...

Ամմա հախչիկ բեխարար է: Յեփ հախչիկ ետա պան կ'իմա, կը սքվորի, խաբար կը տանի Լենուն,

Թե.—Բա, չասես՝ եսկնց, եսկնց...

Լենի կ'ասա.

—Դու դառդ մի արա, ենու խոր կլոխ ուտող, ենու կլոխ լե կ'ուտա: Յես ենորից կոխ ուտողը չեմ. քեզի, խանգիտ մնա:

3

Լուսուն Ուուուսի թաքվորի տղեն Չին-Մաշինու թաքվորին կ'ասա.

—Մանչա քո հախչիկ, վոր զիմ նիշան տունա, վոր յես արխալին զիմ թաղարեքի խես եզիմ:

Կը խանչին հախչիկ: Մեր կ'ասա ուրան,

Թե.—Ուուուսի թաքվորի տղեն քեզի կ'ուզի իրեն թաքունի:

Հախչիկ թե.—Յես ենու չըմ աննի: Յես իմ սոլղալ-թի սովդուն ունիմ:

Թագավորը կը հեռուտաս, պայց ամամ հախչկան շատ սիրելու սաբարին պան չի ասա. մինակ կ'ասա, թե.— Յես խոսք իմ ավեր իմ, քեզի իրիք որ ժուկ կ'իտամ, վոր քո ախր խոսք ասիս:

Հախչիկ ուր խոր կենն կը պատմա գլենու: Լենի յա, համա հենց են քշեր կը թամքա երկու ձի, կ'առնի ուր սիրած, կը փախին Ձին-Մաչինի խողից, կ'երթան, կ'անցին Փռանդստանի խող: Երթուց հառաչ Լենի մեկ կիրը ըմ կը թորկա Ուոուսի թաքվորի աղի անունով, թե.

«Ուոուսի թաքվորի աղն, լավ հիմցիր, հմ. գոյ դանըմինի թանխուր<sup>1</sup>. յես են Լենի յեմ, վոր քո խորըտ, ուրան ասկը միլլաթով բոմբ արի քըցի: Մըկա լը քո նշանված կ'առնիմ, կը փախիմ. աղա յես քըթիր: Պայց ամամ ետուրմով չես պըծնի. յես նորեն կը կամ ջանիք»:

Ուոուսի թաքվորի աղեն ի, ետա տեղից կը թողնի քոն ը փոշման, մաղբուն կ'երթա յետ:

Ըսխտին թաքավորի աղեն ա կ'երթա, Լամսու թաքվորի հախչիկ կ'առնա ուրան թաքուհի, սորա կ'ոծվի թաքվոր, կը նստի ուրան թախտ: Պայց ամամ են որվանք նմ Ձին-Մաչինու թաքվորի հախչկա սուրաթ ուր սրտեն կ'ելի, նմ Լենու քոշած դադ:

Ինչ վոր Լենի յա, են լե ուրան հարիֆ ունի հալա. կ'ասա.

«Չուրի Ուոուսի թաքվորի միլլաթի քոքը բինան չկարմ, յեսիկ խանգիստ չեմ եղի»:

<sup>1</sup> Աչքը թշնամուն հանաչում եւ

Ժուկ ը ժամանակ կ'անցնի, չուրի կը գա ձոչ կուվ: ձոչ կուվի վախա Լենի ուրան դուրուֆ կը փոխա, կ'ընցնի Ուոուսի խող ու կը սկսի ուր բնկերներաց, ուր թայֆայի խետ հաշխատել, վոր Ուոուսի թաքվորին կ'լի վրա պիրի: Վեոչ Լենու հաշխատանք կը խասնի չուրի կուվու սալլաթքերաց մեչ ել:

Լենի կիրը եր, թե.

«Սալլաթներ հորին կը կուվիք, կը սպանիք, կը սպանվիք խաստավիդ թաքվորների, խաստափոր խալլասներ, խաստակլիս խմբապետքերի խեյբի խամար: Թողեք ձե դիրքեր, ցրվեք ձե աներ»:

Մալխաս վերչ, Նամուլթի մըռձեմներաց պես Լենու մարթեր Ուոուսի թե ու թաքվորի խիմաց տակ գ'իչնին, ենքան կը քանտին, չուրի վոր մեկ որ ել ուոա կը քաշին, յերկիր կը զաֆթին, ուրան՝ թաքվորին ել կը պունին, քոլլի քոլլաթով-միլլաթով: Լենի ետոնց թամմըդին սրի կը քաշա, ուրան հարիֆ կը խանա, նոր կ'ասա.

— Ախմ, գիմ ջան դինջցավ. յես իմ խոր, ախպոր, քոլլի հախկատ ըոհաթի հարիֆ խանի...

Ըոհաթ լը Լենու ու ընկերներաց անուն կը տընին «բալ շարըք», գոլվա մեղրի պես քաղցր, արեվի պես պայծառ:

Հայաստանի Կոմկուլի

# ԼԵՆԻՆԻ ԽԵՔՍԹԸ

Ասաց՝  
'ՆՈՒՇՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ'

Գրի առաջ 1935 թվին  
ԳԵՂԱՍ ԹԱՐԳՆԵՐՅԱՆ

Պատմիկ և Աշտարակում բնիկ Նորաշեն դյուղի (Նոր-Բայազետ) բնակիչ, 65 տարեկան, անզրադեա Նուշո Գրիգորյանը: Տարիներ շարունակ սևտործ բանվոր և յեղիկ Բազմում, վորտեղ և սովորել և սույն հեքաթը «կլտնակ տղերքից»:

Գ. ԹԱՐՎԵՂՅԱՆ

Ասեմ ախարընս, հենց վոր Նիկոլ թաքավորի մեր  
կը պըտող ու կը պերի Նիկոլ, ուր խեր շատ կ'ուրախնա,  
վոր ասված ուրուն ժառանգ-նասլենի տվեց ու չթոր-  
կեց մահրում:

Դե արի տես, վոր Նիկոլի մեր, վոր Գերմանու  
թաքավորի ախչիկն էր, են քըշեր մըշ ուր քընին  
երազ կը տեսնի՝ քանց Սիպիուից մե նորելուկ մա-  
նուկ, տնուն Լենին, ուր կըլտի մարթու, ամմա  
մեկ կըակ-կարմիր աժգահա վիշպու պես, կը պարց-  
րանա վեր ամպերաց ու խըտխտուն կ'իչնա հա-  
մա գմեմզ Պետրեպուկ՝ թաքավորի ամարաթ, ու  
կ'իչնա մանուկ Նիկոլի որոցքին վրա, կը փաթըթվի  
զորոցք ու կը սկըսա նորամանուկ խելտել:

Թաքունէին ա, ինչքան ուրուն կը թալա, տեղից  
ժաժ կալ, չի կըռնա: Ինչքան կը բոռա, հավար կը  
խանչա, ուր ծեն ուր բողաղից տուս չի կա... Ենա  
կարմիր վիշապ կը խելտա, կը սպանա նասլենուն  
ու կը թորկա կը քաշվա...

1 Պետրբուրգ—Պետրոգրադ—Լենինգրադ:

Թաքունին ա, խափ ուրուն կոխած կը զառթնա, կը խանչա ուր իրիկ թաքվոր, թե.

—Թաքավոր ապրած կենաս, մեր նասլինի ժառանգուն թե մե խաթա ու փորցանք կն, ետիկ Լենինից կ'ըլնի:

Ու կը պատմա ուրուն տըսած երազ... Դամ-զուսան կը պատա:

Թաքավոր, թաքունին չըն գինա՝ ինչ ենեն...

Յետով թաքավոր կը խանչա ուրուն վաղիր-վաքիր սինոթապետներ ու ենոնց կը պատմա թաքունու կըսեն...

Սինոթապետներ կ'ընգին վըլվըլա. ջառ կ'եցկեն հըմմեն տեղ, թե.

«Ետա Սիպիոն քախի մեչ Լենին վոն ա, վոն չի»:

Տու մի ասա՝ թաքավորի ըսպանող մարթերաց, վոր սիպիոական ին երե, ենոնց մեկի տղաներիցն ա: Ու կը քթնան, խաբար կը տան, թե՝ եսենց, եսենց, եսենց...:

Դե արի տես վոր, յազըլան փողըլմաղ<sup>1</sup>:

Ինչանք թաքավոր խրաման կը խանա, կը խրկա, վոր Լենին ուր խոր-մոր խեա պոնեն, զանեն, ըսպանեն...

Աստու կարող գորութընով, ենտեղ ել Լենինի մեր երազ կը տենա, վոր ուր նորամանկան կըլին ուր-որաց փորցանք ա կալու:

Ետ խըտին, ասեմ ախպորըս, Լենինի խերըն ա, ալըխալ կը ժովղա ուր խիզան, ուր տան ըսըթրի,

<sup>1</sup> Գրվածը չի ջնջվել:

ծանդըր կը թափա, թեվաըր կը վերցա, կ'առնա ուր քուլֆաթ, գրանից կ'անցա.

—Հանյի Գերման, ուր ես, եկամ...

Թաքավորի միլղաղարքիր կը խասին Սիպիոն քաղաք.—Ու հո՛ւ, ըսլա քոչըր, յուրդի գանլըփ վերանա, նա թաս վար, նա՝ համամ<sup>1</sup>... Լենինի խեր առե ուր քուլֆաթ ու փախե...

Ըստըուն, խաբար, աթար, թել կը թալին անխարքի չոսս դեխ. «Բն եսենց, եսենց, ետա նիշաններով մարթ ուր ա փախե»:

Սլըխալ վասակներաց կողմե խաբար կը կա:

Թե.—Ետ նիշանդաներով մարթ Ըոուսեթի Սիպիոնի քախկեն փախե, մըկա Գերմանու խող կ'ապրա:

Ըստըուն Ըոուսի թաքավորն ա, կը կըրա ուր աներոչ.

Գերմանու թաքավորին, թե.

«Հանլը, դաղյա, ետպես, ետպես...»

Ու կը խընթըրա վոր, թուխտ առնելու պես՝ ենոնց)

Թամմըղին միլ-ղաղափ տա:

Ըսխըտուն Գերմանու թաքավորն ա, թուխտը առնելու պես, խըտ-խըտուն ամմա հենց ենա քըչեր քընի մեչ երազ կը տեսնա: Մըչ երազաց խըրեշտակ կ'ասա, թե.

—Ե՛՛յ Գերմանու թաքավոր, կ'ասա, քո ախչիկ Ըոուսու թաքավորեն մեկ են տեսակ կազան մի ծը-

<sup>1</sup> Լալան հեռացել է յուրդը մնացել է ալերակ. վոչ թասը կա, վոչ բաղանիք:

նե վոր, ենիկ ելուն վոր նստավ ուր խոր թախա,  
կ'ասա, ել յերկիր արուն-առցունք կը պըռնա... Մեր  
մանուկ կ'ուրանա, ենպէս մեկ զուլումքնը թաքա-  
վոր կ'եղի, վոր չուրի մկա, նս՛ խող ծընեբ'ա, նս՛ կը  
ծընի, կ'ասա: Ենի սատանի, Բեղգերուխի, Դըմշելի  
ու Սաղայիլի զարմ ա, կ'ասա: Ենի վոր ավսալ եկավ,  
ալամ-ախշարք կը դափտա, երունք կը տնա, ախշարք  
կը վառա, կը թորկա, կ'ասա... Ամմա ասված, կ'ասա,  
եսա պանիր լավ գինա: Ըստրուն ենու խամար դա-  
զար ա ըստեղծել Լենինուն. իմալ ոցի խամար լագ-  
լագուն, վոր ավսալ կն թե չե՛ ենու կըլոխ ճնխճն-  
խի... Զունքի Լենուն, կ'ասա, ասված ըստեխճում ա  
խեղճերաց, անճարներաց, նա զուզուրներաց քոմագ,  
տեր, ոքնական... Վեռչը-վեռչը, կ'ասա, Լենին կը  
ճաթա ոց նիկոլին ու ուրուն սինոթապետներաց  
կըլուխ, ու Ըոուսեթ կը տիրա, թաքավորի թախա  
կ'առնա, ու ինք՛ Լենին կը նստա, կ'ըլնա Ֆաղիրնե-  
րաց թաքավոր, ախշարք կ'անա խաֆսարական, կ'ա-  
սան, ամմա պայց թամմուզ զանգիններաց, համփանե-  
րաց, սինոթապետներաց սուր կը քաշա, ուր երկրեն  
կը խոկա... Մկա, թա տու ենա տղին կպնես, ասված  
քու թախա թառ ը մառ կ'անա, քեղի կը սպանա, կը  
ճընջա, ~~չունքի յաղըլան փողումագ:~~ Աստու մատ եսա  
պանի մեչ կա...

Գերմանու թաքավորն ա, կը զարգանդա, քընեն  
կ'ելնի, ուր Չան կ'առնի աողալ...

«Յաման, յես դալաթ եմ երե», — կ'ասա, ուրուն  
ուրուն:

Ու առանցի մարթու պան ասելու մեկ թուխա  
ըմ կը կրա ուր փեսին, ախշըկան, կը խափա, թե.  
«Մեր ասած կատարի, Լենուն ուր ճնողներաց խեա  
մորթել տըլի, պոճավ, կնաց»...

Ըսխըտին կողտիկ ել մարթ կը տընա, թե.

— Մուզաթ մացեք՝ Լենու մեկ մազ չպակսա. թե  
չե, կ'ասա, ծե իղ ը թող ախշըքեն կը վերում...

Ժուկ-ժամ անակ կ'անցընի, նիկոլ կը մեծնա, ուր  
խորից յես կը նստի թախա, կ'ըլնի թաքավոր:

Աղորթ վոր, կրակ կը տնա, ախշարք կ'ավիրա,  
երուն վոտ կ'առնա, կ'երթա: նիկոլի արած զուլումքեր  
լեզվով չի՛ ասվա...

Լենին ել կը մեծնա, հոսում կ'առնա, կ'ավարդա,  
յեքքա մարթ կը տառնա, ու կողանիկ ենի կ'անցընի  
Ըոուսաստան, ու կը սկըսա պանվորներաց մեչ ու  
քնսիր-քուսուրաց մեչ կողաընիկ աշխատիլ, վոր բունթ-  
անա, թաքավորին թախտից քըցա...

Եսխըտին նիկոլի մարթեր եսա պան կ'իման ու  
խաղար-խաղարավոր մարթեր կը պընին, կը սողանին,  
կը կոտորին, կ'աքսորին, ամմա Լենին կը փախնա  
թաղադան Գերմանու երկիր:

Ետատեղ ուրիշ փախնողներու խեա իրան զուվաթ  
կը խավքա, չուրի կը տեսնա, վոր տանակ վոսիուրին  
խասավ, ել խամփերիլ չեղի, զուլում ծեր կը տա, նոր  
Լենին կ'առնա ուր մարթեր ու գրանից կ'անցընա,  
կը մտնա Ըոուսաստան:

Աստուժմե յեր, Լենու անուն լսելու պես թամմուզ  
գորք-գորպակա կ'անցան Լենու քամակ: Զունքի ենա  
վախա գորք կը վերուն քնսըրի, պանվորի մենեն:

Հենց վոր Լենու քոմագ կը շատնա, մեշկ կը պըն-  
դանա, կ'առնա ուրուն զորք-զորապետ, համամա գճւնւղ  
կը քըշա գէխ Մոսկոֆ<sup>1</sup>: Պասնեղու պես Մոսկոֆ  
լե, Պետրոպոլ լե, Կիւ<sup>2</sup> լե, թամմնւղ, թամմնւղ քա-  
ղաքներ կ'առնա, Նիկոլի մարթեր կը ճառթա, կը կո-  
տորա, կը խըրկա, իրան Նիկոլին ել սաղ կը պոնա:

Նիկոլ ըստրուն կ'ասա.

— Բնլի, յաղըլան փողուլմաղ: Իմ ճակատիս ես եր.  
կըրված, ընդուր ճակատին ել՝ են:

Նոր, Լենինն ա, Նիկոլի կըրիս կը դանա, ինք  
կը նստա թախտ ու ախշարք խալսարահան կը կա-  
ռավարա...

Ետա ժամանակ քնսիր-քուսուր կը խասին ուրանց  
մուրաղին, տուք ել խասեր ձե մուրաղին:

Ամմեն, ինշալլահ:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

<sup>1</sup> Մոսկովա:

<sup>2</sup> Կիևի.

**Ա.**

Աբա—տղամարդու հազուստ,  
բրդէ վերաբիու

Աբադ—շին

Աբութ—ճգնավոր, մենայնաց

Ագար—յեթե, թե վոր

Աղակաթ—հավասարութուն. ար-  
գարութիուն

Աղար-բեղար—ցավ ու շու

Աղիզ—հարազատ. թանկագին

Աղբայիլ—Իսրայել. հողեառ  
հրեշտակ

Ալամ—ամբողջ, վողջ

Ալբրհալ—խեղույն, անմիջապես

Ալման—դերմանացի, Գերմանիա

Ալսյաման—հեյ-վախ, ավանդ

Ամարաթ—ապարանք, պալատ

Ամմա—բայց

Ամբըյան—ամերիկացի

Անբմ—անուն

Անխուզ—անհող

Անու—նրա

Անունք—նրանք

Անունց—նրանց

Աջալ—որհաս

Աջամ—սպարսիկ

Առդ—արհավիրք

Ասման—տես առդ

Ավաղըն—վոխարենդ, վոխանակդ

Ավսալ գալ—աճել, դորանալ,

առաջ գալ

Ատունք—դրանք

Արան—հարթավայր, դաշտ

Արխալըզ—տղամարդու հազուստ

Արխային—հանգիստ, փստան

**Բ.**

Բադար—շուկա

Բաժ—հասակ

Բալլա-բորան—բուք-բորան

Բալշերիք—բալշի իկ

Բանլըլ—գույն, թերես

Բադ—այդի

Բայրադ—գրոշակ

Բանդլիվան—յենթակա, հլու,

հնազանդ

Բաշի-բալա—գլխացավանք

Բաշլայել—սկսել

Բաշիվիկ—բուլշիվիկ

Բար—ստուգ, բերք  
Բարբաղ—ավերակ, բրնձակ  
Բարեմբար—հավասար, հավասարակշիռ  
Բարութ—վառուդ  
Բեր—վոչխարները կթելու գործողութունը. մակադատեզ, վոչխարներին հանգըստանալու և կթվելու վայրը. վոչխարներին կաթը կթելու ժամանակը  
Բեխարար—անտեղյակ  
Բհար—գարուն  
Բոյ—հասակ  
Բոշ—գուր, դատարկ  
Բոշա—բոշա, գնչու  
Բուսաթ—կերպարանք, դեմք  
Բնթուն—վողջ, բոլոր

Պ

Գնդան—այ տղա, ծառա  
Գնլաղ—սպասելիք, գալիք, ապագա  
Գանջ—յերիտասարդ  
Գանջնալ—յերիտասարդանալ  
Գարադավն—ցարական վոստիկանության ամենատերին առաձանավորը, городовой  
Գինան—գիտեն  
Գն—ահա, ահապատիկ, հրեն  
Գնդալթի—աչքի տակ գտնվող, նկատի առած

Գնբազնու ընկա—գերեզմանդ տեղահան լինի  
Գնլ—ջամալ—վարդ կերպարանք  
Գնլլա—գնդակ  
Գնլլայել—գնդակահարել  
Գյուլան (ամիս)—մայիս ամիս  
Գունան—հույս  
Գուվա—լիբ թե, այսինքն

Պ

Դադնակ—մահակ  
Դալդա—սուջախ—ծածուկ անկյուն  
Դանդալոշ—ապուշ  
Դառվուշ—դեվոլիշ  
Դաստան—փուռնջ, կուլա, խուժը  
Դանն—դեվան—դատ ու դատաստան

Դարադաշ—կախողան  
Դարման—գեղ, սպեղանի  
Դարվան—ժամանակ, ժամանակամիջոց, ասպարեղ  
Դեխ—կողմ  
Դեվլիթ—դալամ—գրել և թանաքաման (պարսկական)  
Դըխ—գեպլի, մինչև, կողմ  
Դիլադ—նպատակ, իղձ, խնդրք  
Դինբաշի—կրոնապետ  
Դիվանխանա—գրասենյակ, դատարան  
Դլընիկ—հենակ, սյուն  
Դմշել—սատանա, ապուշ  
Դովլաթ—ունեցվածք, կարողություն

Դորեսի խեղ—այսուհետև  
Դուլ—հարթութուն, տափարակ, տափաստան, ուղի, շխտակ  
Դուլ սիրա—պարզասիրտ, անկեղծ  
Դուլման—մեղ, մառախուղ  
Դուլխա—աշխարհ, լերկիր  
Դուլման—թշնամի, հակառակորդ  
Դուլ—թանկագին քարի տեսակ  
Դուլքան—խանութ, կրպակ  
Դուլքանչի—խանութպան  
Դրուֆ—կերպարանք, դեմք

Ն

Նեթանք—գնանք  
Նեման—վերստին, դարձյալ, նորից, այնպես  
Նեթիրար—գտահուլթյուն, վատ, համոզմունք  
Նեիկ—հա  
Նեխանդար—այնքան  
Նեհնց—նրանց  
Նու—նրա  
Նսկեց—գցեց  
Նվար—յերեկո  
Նտա—այդ  
Նտոնք—դրանք  
Նտվեն—հետեվից  
Նքի—այդի

Ջ

Ջաթի—արդեն, դե, ապաքեն  
Ջակոն—որենք, закон

Ջաման—ժամանակ  
Ջանդին—ունեվոր, հարուստ  
Ջառքը գոռ—թափ և ուժ  
Ջարաֆաթ—կատակ  
Ջար—զաբար անել—փչացնել, քարու քանդ անել  
Ջավթիկ—գրավել, բռնագրավել, խլիկ  
Ջըր—բուխ, անտաշ  
Ջըմեն—ամեն, բոլոր, վողջ  
Ջմրութ—զմրուխտ  
Ջոռքա—ունեվոր, հարուստ, кулак, բռնավոր.

Ջ

Ջն—սն, անդր  
Ջուլում—զժբախտություն, աղետ  
Ջուր—լիբ, լիբա  
Ջվուկ—շրջել, պտտել, ման գալ

Ը

Ըրըպար—անչպար, հողագործ, յերկրագործ  
Ըհաթ—տես՝ ոահաթ  
Ըսխտին—այս անգամ  
Ըսպոռչի—հարկահան, еборщик  
Ըստուլ—սեղան, стол

Թ

Թնդան—նոր  
Թնդան—նորից, վերստին  
Թագացնել—նորոգել  
Թագիկ—վորսկան շուն, բարակ

Թալաք—թալարդ  
Թալանչի—ավարառու  
Թալլած—թալանած, ձգած  
Թալել—ձգել, նետել  
Թախտ—դահ  
Թամաշ անել—նայել, դիտել  
Թամբեհ—պատվիր, հանձնարա-  
րութուն

Թամմըզ կամ Թամիդ—վոզճ, բո-  
լոր. մաքուր

Թալֆա—խմբակ, խմբակցութուն  
Թավատ—աղնիակահան, կալվածա-  
տեր (վրացի)

Թաջ—թազ

Թարաֆ—կողմ

Թելլու (յար)—նրբին, նազիկ

Թըբաշ—կոկ, բնտիր, սափրած

Թիֆան—փոթորիկ

Թոզ—փոշի

Թորկել—թողնել

Թոփ—թնդանոթ

Թումբան—վարտիկ

ժ

Ժամխեր—ժամհար

Ժուկ—ժամանակ

Ժուռ դալ—փնտրել, վորոնել

Ի

Իզ ու թող—հետք

Իզին—թույլատվութուն, լրա-  
վունք

Իզբալ—բախտ, ճակատագիր

Ի՞մալ—ինչպես  
Ինգնիլ—ընկալ  
Ինդլիդ—անդլիտցի  
Ինթիզար—կարոտ  
Ինչ Թար—ինչ կիրպիլ, ինչ տեսալ  
Ինչըլս—ինչպես

Լ

Լադլագ—արագիլ  
Լադլմ—ակահն

Լամս—դերմանացի, немень

Լաշ—լեշ, դիակ

Լիբաս—տարագ, արտաքին կիր-  
պարանք, լիբաս

Լկամ—ակահնի փոս

Լոս—լույս

Լոթ—տիլոր, մերկ, խիստ չքա-  
վոր

Խ

Մարար—լուր, տեղեկութուն

Մազալ—տերև

Մազիյին—տեր, хозяин

Մադնա—գանձարան, գանձ

Մալի—կապիբոտ, գորգ

Մախանդըթոն—առատութուն  
լիութուն, խաղաղութուն

Մակառ—հակառակ

Մամխար—ողնոց, ողնակահն

Ման—խջկվան, հյուրանոց

Մանչել—կանչել

Մաս—բնտիր, բենեկ

Մասյաթ—բավորութուն

Մնավար—հավար, ահագանդ

Մնավարահան—հավասարահան

Մնտել—հատնել, մեռնել, սատա-  
կել

Մնարխուշ—սև թռչուն, արծիվ

Մնյը—ողոռու, շահ

Մնտ—հետ

Մըզմաթ—ծառայութուն

Մըզմաթքը—ծառայող, սպասար-  
կող

Միզան—ընտանիք, գերդաստան.  
ընտանիքի իզակահն սնոր  
անդամները կին, ամուսին.  
զավակ

Մլավուզ—սուրհանդակ

Մըլդ—ժողովուրդ

Մըշտ—նիզակ, սվին

Մոլթուխ—անթ, թեւտակ

Մոյքի—հողի

Մոշ—լավ, բարի

Մորոտ—գեղեցիկ

Մոքնիլ—հողնիլ

Մուս—հյուսն

Մուսութեն—հյուսնութուն

Մուլի—հյուր

Մուֆադ—մերացած, թուլացած

Մըտ—հետ

Մըտ—խտուն—հենց. անմիջապես

Չ

Շար—ցար, шар

Շե—ձեր

Շեթ ք պետ—մանր-մուկ

Է

Կազլի (մեչկապ)—մազե գոտիկ

Կնի—ժամանակ

Կան (արմատ կանել բայի)—պա-  
րանի կամ թելի ձվածե  
կամ բոլորակ փաթույթ,  
վոլորք

Կառտա—քարտ (կուս. տոմս),  
карта

Կասմաժոններ—կոմսոմոններ,  
կոմիտեյականներ

Կարմիլքեր—կարմիրներ. հեղա-  
փոխականներ

Կեր—կար

Կզկել—կծկել

Կին—կային

Կիտնակըթոն—գիտնականու-  
թյուն

Կնքտեր—կանայք

Կողնիկ—գողունի, գաղտնի

Կոռ (կոռո)—գործ

Կու գեր—կը գար, գալիս եր

Կուս—գույն

Կուպեռնատոր—նահանգապետ,  
губернатор

Կուս—թե. կողմ

Կուսակըթոն—կուսակցութուն

Կուրսել—կորուսել, կորցնել

Կուց—կոծ, լաց

Կուեթ—հողակոշտ

Կըսա—պատմութուն, զրույց,  
հեքիաթ

Հանրաշահարեշ  
Հալ—վիճակ, դրուեթյուն  
Հալ ը դադյա—քեֆ ու հալ  
Հանն—գեռ  
Համիա—ունեկոր, հարուստ,  
КУЛАК

Հանկեռեթ—աշակերտ  
Հաջաթքեր—դործիքներ  
Հավար—ահադանդ  
Հարեֆ—մարդ հյակ, համբակ  
Հեյրան—մատաղ  
Հիտակե—մաքրել  
Հիրես—գեմք, յերես  
Հոքմաթ—իշխանություն, կառա-  
վարություն

Ղ

Ղադար—չափ, մեծություն, քա-  
նակ  
Ղադար—պատիժ  
Ղալամ—գրելչ  
Ղամ—հոգս  
Ղամխար—տխամխար, պաշտպան,  
Թե ու թիկունք, հավատարմ  
Ղայդա—յեղանակ, կերպ  
Ղաստի—գլխամամբ, գլխավորյալ,  
ի հեճուկս  
Ղավուն—սեխ  
Ղարարինա—հնաձեկ ատրճանակ,  
հրացան  
Ղարա խաբար—սե լուր, բոթ  
Ղխամաթ—դատաստան (վերջին)

Ղրամ—տեսակ, ցեղ  
Ղոռուն—զորք  
Ղոչադ—արել, քաջ  
Ղուլ—ծառա, ստրուկ, հյու  
Ղուլուղ—ծառայություն  
Ղուժբար—ռուժբ  
Ղուս—հոգս  
Ղուվաթ—ուլժ  
Ղուրբան—մատաղ

Ճ

Ճամխել—ուղարկել, ճանապարհել  
Ճայփուն—ճապոնացի  
Ճանթ—ջարդ, կոտորած  
Ճժուկ—մանուկ, փոքրիկ յերեխա  
Ճղիլ—փակչել, խույս տալ, պատ-  
ռել  
Ճժճրմա—ճահիճ  
Ճիղ—ճյուղ  
Ճոչ—մեծ, ավադ  
Ճով—խրձկապ

Մ

Մազար—միթե  
Մադաթ—ոգնություն  
Մազլում—տկար, խեղճ, նվաստ  
Մալ—ունեցիվածք, հարստություն,  
կայք, դույք  
Մալուրիկ—բոլշեկիկ  
Մահրում—զուրկ  
Մամլաքնթ—լերկեր, իշխանու-  
թյուն, պետություն  
Մայա—զրամադուր

Ման—կռաքար 12 ֆ.  
Մաշուր—հայտնի, հռչակված,  
ակնբախ  
Մաջալ—միջոց, մամանակ, հնա-  
րավորություն  
Մառտին—հրացանի տեսակ  
Մասսար—հավատ, կրոն, դավա-  
նանք  
Մացել—մացել  
Մեկել—մյուս  
Մեյիդ—գիլ, դիակ  
Մե բաշ—միանգամից  
Մերի—անտառ  
Մըկա—այժմս, հիմա  
Մըշ—մեջ  
Մըճան—մարջան  
Մըրկել—այրել, խանձել  
Մըլլաթ—ժողովուրդ, ցեղ  
Մըղազափ—դահիճ  
Մոդ—ճանճի տեսակ  
Մոշա—անտառ  
Մով—խաղողի վաղ  
Մուլք—անշարժ կայք  
Մուխաննաթ—դավաճան  
Մուննաթ—խնդրք  
Մուրեխ—մորեխ  
Մարր—Յեզիպտոս

Յ

Յաթուր—հնազանդ, յեսթարկվող  
Յարութ—հակնթ  
Յաման, յաման—հեյ-վանիս, ավանդ  
Յան—կողմ

Յարանալ—յնեբալ, գեներալ,  
генерал  
Յեթրմ, յեթիմ—վորք  
Յեդան—յերկրագործական գոր-  
ծիք, վորով վերցնում են  
խուրձերը, խոտը  
Յեսավուլ—գյուղական ստորին  
պաշտոնյան, վոստիկան  
Յեսըր, յեսիր—գիլ  
Յերեշ—քելք, քայլվածք  
Յըլիլ—ձիերի յերամակ

Ն

Նադուգար—անճար, խեղճ, ընչա-  
զուրկ  
Նամուրթ—մըճըմ—Նեմըրթի  
աշաբարկը քանդող մըր-  
ջյուններ  
Նաշար—խեղճ, տկար  
Նասլենի—ժառանգ, наследник  
Նանֆ—շահ  
Նով—նավ (ջրաղացի)  
Նոքսը—ծառա

Շ

Շամաթա—աղմուկ, կռիվ  
Շայի—հինգ կողեկանոց  
Շափաղ տալ—ճառագայթել  
Շափախկա—գլխարկ, шапка  
Շերիդ—կիսու, կիսարար, հալալ  
բաժին  
Շիշ—շամփուր  
Շիրա—քաղցու

Շնուխք—շնորհք  
Շողոմ—շողոքորթ  
Շուխ—փափկասուն

**Ո**

Ոգա—դուզական սենյակ  
Ոզգան—այլ. ոտար  
Ոռդու—զորք. բանակ  
Ոսրմ—ուսում  
Ումըր—կյանք  
Ուժուզ—հույս  
Ուրանց—լրենյ

**Չ**

Չալիչ դալ—տանջվել  
Չամաչուր—սպիտակեղեն, զոտա-  
չոր  
Չավ անել—տարածել, ի լուր  
մարդկանց հայտարարել  
Չարխի ֆայար—ոգանավ  
Չափ (լեզու)—լեզվանի, լեզվադար  
Չանք—զղբարի դործիքը  
Չաքըջ—մուրճ  
Չին-Մաչին—Չինաստան  
Չխո—արդեն. հո, ապաքեն  
Չնզըլ—քաքաբոտ վայր  
Չորան—հովիվ  
Չունքի—փորովհետեվ, զի  
Չոնր—մինչևի, ց  
Չփլախ—տկլոր. աղքատ

**Պ**

Պան—բաս

Պախիզ—պարտեզ  
Պաղրեխ—բաղեզ  
Պայս—բայց  
Պառտիա—կուսակցութուն,  
партия  
Պոշ—դատարի. դուր  
Պոպոզ—սրածայր գլխարկ  
Պոլոք—բոլոք  
Պոստով—պրիստավ, пристав  
Պոքսիլի—բուռնցք

**Ջ**

Ջաբախանա—զինանոց. անպիտք  
դենք  
Ջահվար—թանկադրին քար. դոհար  
Ջահտ անել—ջանք թափել  
Ջամաթ—ժողովուրդ, հասարա-  
կութուն  
Ջամալ—կերպարանք, տեսք, դեմք  
Ջամդակ—դի, դիակ  
Ջամդար—ժանդարմ, жандарм  
Ջան—մարմին. հողի  
Ջանպախ—լը Ջանք պահող, խը-  
նայող. լողը, դատարկա-  
պորտ  
Ջան—կոչ, ազդ, հայտարարու-  
թյուն. մունենտիկ  
Ջընդո—պատաստոված, հնամաշ-  
ցնցոտի  
Ջըվար—լուր. պատասխան  
Ջուն—ջին, չնը վողին

**Ռ**

Ռահաթ—ժողովուրդ. հպատակ

Ռես—դուզական քյոխվա  
Ռոտ—ձող (шесть)

**Ս**

Սարաբ—պատճառ  
Սարբ—համբերություն  
Սահնիկ—ձիավոր, всадник  
Սալըզ—լուր, տեղեկանք, տեղե-  
կություն  
Սաննաթ—արհեստ  
Սազ ր սոլ—աջ ու ձախ  
Սամյելի—սամուս (քամի)  
Սավետ—խորհուրդ, совет  
Սապոք—վոսնաման, կոշիկ,  
сапог  
Սաջ—կասկարա  
Սարքար—պետ, հակիչ, վերահս-  
կիչ  
Սարֆա անել—լայել չանել  
Սել—հեղեղ  
Սելավ—հեղեղ  
Սեուուփ—անարատ, մաքուր  
Սեյր—զբոսանք  
Սըթամ—զժբախտություն,  
ցասում  
Սըհաթ—ժամ. ժամացույց  
Սըֆաթ—յերես, դեմք  
Սթար—զազար, հանդստություն.  
ապաստան  
Սիթամ—տես սըթամ  
Սիլահ—դենք  
Սլուզ—աղբուկ  
Սովդուն—սիրական

Սորա—այնուհետև, հետո  
Սուրաթ—պատկեր, նկար

**Վ**

Վազ—ваза (աման)  
Վազիր—վաքիլ—պալատական  
պաշտոնյաներ  
Վախուկ—վախկոտ, յերկչոտ  
Վախտ ր մադաթ—ժամանակ  
Վանյ լրմըն—անխ յաման  
Վավելլայիլ—բան և թի, յեթե վոր...  
Վարավուրդ անել—նայել, տընտ-  
դել, կշտադատել  
Վարուց կամ վարոց—ճեպոտ  
Վարսալամ—վերջագիտ  
Վաքիլ-ադիկոն —[անամակալ,  
опекун  
Վելիլ—վայելիլ  
Վերան—ավեր  
Վըլվըլա—անհանգստություն,  
լրարանցում  
Վըրե—ինչու  
Վլաստ—իշխանություն, власть  
Վով—ով  
Վուր—վոր

**Տ**

Տազ—ճաղատ (դուրխ)  
Տախամանս—տախամանց, տակից  
գործող, դադարել մի բան  
անող  
Տանես են—տանում են  
Տանց—զբանց

Տանք—դրանք  
Տատ—դատ  
Տը—պետք է, պիտի  
Տորան—տես դուրան

Յ

Ցան—փթիլը, աթար, աթարի  
մանրունք

Փ

Փաթավա—հնամաշ, քրքրված,  
տձև վոտնաման  
Փանթըսդա—բատիստ, батист  
Փալթո—վերարկու, пальто  
Փախ ը փախ—փախե փախ, խու-  
ճապ, գաղթ  
Փախըլթոն անել—նախանձել  
Փահլեվան—կտրիճ, զորեղ, հզոր,  
ըմբիշ  
Փայիզ—աշուն  
Փաչա—փաչեք—ազդր  
Փատ—փայտ  
Փատատ—քրունդ  
Փափաղ—մորթե գլխարկ  
Փեշ—քղանցք  
Փթիլ—գոմաղբ, աթար  
Փշտով—ատրճանակ  
Փչաներ—փչանար  
Փողան—փողոց  
Փոստ—մորթ

Ք

Քած—եղ (արհամարհական առու-  
մով)

Քամակ—դավակ, կունակ, թիկունք  
Քանց—ինչպես, վոնց վոր  
Քանքան—ականափոր  
Քաշքշան—քաշքշուկ, կողոպուտ  
Քար ը քյասար—կտրիճ  
Քասըբ—քոնսուբ—աղքատներ,  
խեղճ ու կրակ մարդիկ  
Քանֆըր—անխիղճ, անհոգի  
Քերեկան—քերականության գիրք  
Քըդակ—պոպոզ—սրածայր գըլ-  
խարկ  
Քոլ—թուփ  
Քոնուբ—ածուխ, սև  
Քոնակ—ոգնություն, ոգնական  
Քոնայչի—ոգնական  
Քոս—մաշկային հիվանդություն  
Քոք—բինա—արմատ-բուն, տուն-  
տեղ  
Քոլ—մոխիր  
Քոլլի-քոլլիթ—վողջ ընտանիքը  
Քոլլուգ—մոխրանոց, աղբանոց  
Քոլխան—մոխիր. մոխրանոց.  
փոշի, փոշեկոլյա  
Քուլֆաթ—ընտանիք  
Քուր ը քուլֆաթ—տուն ու տեղ.  
ընտանիք  
Քուչա—փողոց, նրբանցք

Շ

Շահլա—մշակ, բանվոր, աշխա-  
տավոր  
Շաղիր—չքավոր

Շանդ ը ֆել—հնարք, հնարա-  
մտություն, խարդախու-  
թյուն  
Շուզարա—խեղճ, աղքատ մար-  
դիկ

Շրանդսըզ—ֆրանսացի  
Շրանդստան—Շրանսլա  
Շութուն—փոթորիկ  
Շոխնջ—ղզեստ. ֆրենչ



Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

	62
Յերկու խոսք—խմբագրութիւն . . . . .	5
Լենինը ֆուլկրըրի մէջ—Կ. Մելիք-Ռեանշանյան . . . . .	7

ԼԵՆԻՆԸ ՀԱՅ ՖՈՒՎՈՐԻ ՄԵՋ

Լենինու խաղ . . . . .	61
Սովետի «Լե-Լե»-ն . . . . .	63
Լենու խաղ . . . . .	65
Մըր Սաչոյի խաղ . . . . .	67
Պան, պան, պան, Լենին բարա... . . . .	70
Լենինի յերբը . . . . .	71
Պճիճ կեղին արեց զակուէն... . . . .	73
Լենինի ջանիման . . . . .	75
Լենինի խաղը . . . . .	77
Լենինի ջանիմանը (ժող. պարիբոյ) . . . . .	78
Լենինու խաղ . . . . .	80
Լենին ասով.—Կը տամ ձե խոց... . . . .	83
Ունինք, չունինք մեկ Լենին... . . . .	85
Երեկ բարբաղ էջի... . . . .	86
Լենի շափաղ քանց արեվ... . . . .	88
Գնանք սարի քամակը... . . . .	90

	Եջ
Լենինի յերգը . . . . .	92
Լենինի յերգը . . . . .	95
Լենինի յերգը . . . . .	96
Լենինի յերգը . . . . .	98
Լենինի դաստանը . . . . .	100
Լենինի յերգը . . . . .	104
Լենինի յերգը . . . . .	106
Արեվելը, արեվմուտքը, հյուսիս ու հարավ...	108
Բուրժուական ազգերի հետ կովեցիլը...	111
Լենինի տաղը . . . . .	113
Լենինի յերգը . . . . .	115
Լենինի յերգը . . . . .	116
✓ Լենինի մահը . . . . .	119
Յենգի դաման . . . . .	120
✓ Լանին փառա (նաղը). ասաց՝ Գ ա ռ ո Բ ա ը ց ու մ յ ա ն,	
զրի առավ Գեղամ Թարվերդյան . . . . .	123
✓ Լենու խաբանթ. ասաց՝ Ս ա հ ա կ Ա պ ը ո յ ա ն, զրի առավ	
Գեղամ Թարվերդյան . . . . .	139
✓ Լենինի խեղանթը. ասաց՝ Ն ու շ ո Գ ը ը գ ո ը յ ա ն, զրի	
առավ Գեղամ Թարվերդյան . . . . .	151
Բառարան . . . . .	161

« Ազգային գրադարան



NL0382809

71. 930